3999

...ԻՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

## ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

61

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ
## Ա. ՏԱՐԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ, ԲԱՌԱԴԻՏՈՒԹԻՒՆ, ՋՐՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԳՐԵԼ ՈՒ ԳԾԵԼ

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

*Ծանօթէն անծանօթը*
*Պարզէն բաղադրեալը*
*Դէմ յանդիմանական ուսուցում*
*Աստիճանական զարգացում*

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Կ. Պոլիս

1909

491·99-8
Մ-23

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

*Սուլթան-Համամ*

Կ. ՊՈԼԻՍ

010

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

## ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

### Ա. ՏԱՐԻ

002

491.99-8
23

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

## ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

### ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ
### Ա. ՏԱՐԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԳՐԵԼ ՈՒ ԳԾԵԼ

**ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ**

*Ծանօթէն անծանօթը*
*Պարզէն բաղադրեալը*
*Դէմ յանդիման ուսուցում*
*Աստիճանական զարգացում*

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Կ. Պոլիս

1909

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կ. Պոլիս, 5 Փետրուար, 1905

Համար 1981

# ՎԱՒԵՐԱԳԻՐ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

*Ուսումն. Խորհուրդս քննութեան առաւ «Մայրենի Լեզու» դասագիրքին Բ. մասն որ կը պատկանի Մանկապարտէզի շրջանին, եւ անոր պարունակութիւնն օգտակար եւ պատրաստութիւնը համաձայն գտնելով Ազգ. Վարժարանաց Կրթական Ծրագրին՝ վաւերացուց զայն եւ արտօնեց անոր կիրառութիւնը Մանկապարտէզներու աշակերտաց եւ աշակերտուհեաց համար:*

*Ի Դիւանց Ուսումն. Խորհրդոյ*

Վ. Ատենադպիր — ԲԱՐՍԵՂ ԱՒԵՏԻՍԵԱՆ

Ատենապետ — ՏՈՔԹ. Տ. ԱՃԷՄԵԱՆ

37992-67

51693-Ա.Հ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## ՏԱՐՐԱԿԱՆ Ա. ՏԱՐԻՈՅ

«Մայրենի Լեզու»ի դասագրոց մանկական շրջանի Ա. եւ Բ. հատորներն հրատարակուեցան արդէն բոլորովին նոր ու դիւրուսոյց մեթոտով մը :

Այս անգամ Յանձնաժողովս հրապարակ կը հանէ Տարրական Ա. Տարին, որուն բովանդակութիւնն յօրինուած է կանոնաւորապէս միօրինակ յատակագծի մը վրայ, այսինքն մէն մի հատուած կը ներկայացնէ բարոյական կամ իրագիտական ընթերցանութեան նիւթ մը՝ որուն իմաստի մասին խորհրդածելու եւ վերլուծելու թելադրող հարցումներ կան հատուածին վերջը, ինչպէս նաեւ զրուցագրական եւ բառագիտական վարժութիւններ :

Յանձնաժողովս կը յուսայ թէ վարժարանաց վարիչներ եւ ուսուցիչներ պիտի գնահատեն «Մայրենի Լեզու»ի դասագիրքին նոր ուղղութեամբ պատրաստութիւնն , եւ պիտի ջանան իրենց պաշտօնավարած դպրոցներուն մէջ գործածել զայն, մանաւանդ որ սոյն հրատարակութենէն գոյացած հասոյթը յատկացուած է գիւղական կարօտ դպրոցներու պէտքերուն նպաստելու :

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

## Ա. ՏԱՐԻ

### ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մեր տունը մեծ է և ունի ութը սենեակ — դահլիճ, հիւրանոց, սեղանատուն, մանկանոց, ննջասենեակ, առանձնասենեակ, նախասենեակ ու խոհանոց։ Դահլիճն ամենէն մեծ սենեակն է, իսկ նախասենեակն ամենէն փոքրը։ — Մանկանոցը մաս-



Տուն



Ննջասենեակ

նաւորաբար մեզի համար շինուած է. Հոն կը պատրաստենք մեր դասերը։ Անիկա չորս պատուհան ունի եւ երկու դուռ։ Մեր սենեակը շատ լուսաւոր է, վասն զի պատուհան-ները մեծկակ են։ Սենեակին մէկ անկիւնը վառարան դրուած է, իսկ միւս անկիւնը՝ գիրքերու և թուղթերու պահարանը։ Սենեակին մէջ սեղան մը և քանի մը աթոռներ կան։


Վառարան

Պատերէն վար կախուած են շատ մը կենդանիներու և բոյսերու նկարներ որոնք մեզի հարկաւոր են դաս պատրաստելու ժամանակ։ Տան մէջ ամէն բան ծանօթ է ինծի՝ սեղանները, աթոռները և պահարանները։ Ես ամէն սենեակ կը վազվզեմ, հօրս հետ ներք-


Սեղան



նասենեակը կը մտնեմ, մօրս հետ՝ ննջարանը։ Կը մտնեմ դահլիճը, հիւրանոցը, նաեւ խոհանոցը՝ ուր ճաշէն առաջ ա՜յնքան անոյշ հոտեր կը բուրեն, և մառանը՝ ուր կեռերու վրայ կախուած են պատուական նպարեղէններ։ Տան մէջ առտուն նախաճաշիկ կ՚ընենք, ցորեկը՝ ճաշ, և իրիկունը՝ ընթրիք, իսկ գիշերները հանգիստ կը քնանանք մեր անկողնին մէջ։

Թելադրութիւններ. — 1. Անջատեալ բառերուն սահմանը տալ հայերէն բացատրութեամբ։— Թելադրութեամբ գրել հատուածը։

2. Մեր տունը քանի՞ սենեակ ունի։ — Ո՞րն է ամէնէն մեծը, ամէնէն փոքրը։ — Ո՞ւր կը պատրաստենք մեր դասը։ — Ի՞նչ առարկաներ կան մէջը։ — Տանը մէջ ինչե՞ր կ՚ընէք։ — Մառանին մէջ ինչե՞ր կան։

3. Ի՞նչ է Անունը = Գոյականը։

4. Մեր տունը հատուածին մէջ որոշել թէ ո՞րը անձ կը ցուցնէ, ո՞րը իր = առարկայ։

## ԱՌԱԾ

Աշխատութիւնը մեր կեանքին քաղցրութիւն ու երջանկութիւն կուտայ ։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ինչի՞ կը ծառայեն տան մը հետեւեալ մասերը. 1. Արտաքին մասեր. — Պատ, պատուհան, դուռ, տանիք, կղմինտր, ծխան, երդիկ = օճաք, պատշգամ, խուղխամ = վանդակ ։

2. Ներքին մասեր. — Բակ, մարագ, խոհանոց, գոմ, ախոռ, մառ, բնակարան = սենեակ, մառան, խոհանոց, լուացարան, տախտակամած, ձեղուն, գաւիթ, սրահ ։

## ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Գիւղին ծայրը, վտակին քովիկ՝
Ծառերուն մօտ, կանաչ գոյնիկ
Խրճիթ մը կայ համեստ, սիրուն.—
Իմ անմոռաց հայրենի տուն ։
Կը բաբախեն հոն անդադար
Զոյգ մը սրտեր ինծի համար,
Հօրս մօրս անոյշ սրտեր,
Գոհարներու հետ չեմ փոխեր ։
Օրօրոցս հին ու ցածուկ
Հոն անկիւն մը կը գտնէք դուք,
Հոն բացուեցան լեզուիս կապեր
Նախկին քայլերս հոն եմ առեր ։



Ուրախութիւն, հաճոյք ու սէր
Հայրենի տունս են լեցուցեր
Արեւուն տակ չկայ մէկ բան
Իմ հայրենի տանըս նման ։

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիրները ։ — Թելադրութեամբ գրել հատուածը ։

## ԱՌԱԾ

Ի՜նչ անոյշ է հօրը մօրը յիշատակը, ո՛չ մէկ բան կրնայ մարդուս սրտէն ջնջել զայն ։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ըսէ՛ք թէ ինչի՞ կը ծառայեն սենեակի մը հետեւեալ կահ առարկաները. 1. Աթոռ, թիկնաթոռ, նստարան, սեղան, մահճակալ, բազմոց = սէտիր, ժամացոյց, պահարան, հանդերձատուն, գրասեղան, գրատուն, հայելի, գորգ, կապերտ, խալի ։

2. Դասական առարկաները. — Գրասեղան, աթոռ, սեղան, աշխարհացոյց, գրատախտակ, սպունգ, կաւիճ, գիրք, գրիչ, տետրակ, մատիտ, քանակ = տողաշար, ձգախէժ = կոմիլաստիկ ։

## ԳԻՒՂԱԿ ԵՒ ԳԻՒՂ

Թէ՛ գիւղակին և թէ՛ գիւղին մէջ գեղջկական շատ տու-



ներ կան ։ Գիւղակը մէկ եկեղեցի, իսկ գիւղը մէկ կամ երկու եկեղեցի կ՚ունենայ։ Թէ՛ գիւղակին և թէ՛ գիւղին մէջ փողոցները քիչ են և եղածն ալ ծուռ ու մուռ է ։ Հայ գիւղերու տուները փոքր են, ու հասարակ գիւ-



Կովարած



ղացին իր խրճիթին մէկ մասը գետնին տակ կը շինէ և պատերն ալ ցեխով կը ծեփէ ։ Քարաշէն տուներ հազուագիւտ են գիւղերու մէջ, գիւղացին իր խրճիթը կը ծածկէ հողով ։

Գիւղին մէջ կան կալեր․ անասուններու յատկացուած ընդարձակ տեղեր, պարտէզներ ու այգիներ ։ Այս վերջինները սովորաբար ցանկապատ կ՚ըլլան ։ Գիւղացին իր սայլին գլուխը նստած, մտրակ մը ձեռքը, իր եզն ու գոմէշը կը քշէ ։ Երբեմն ալ իր գերանդին ուսին վրայ, մանգաղը մէջքը, կամ հունձքի կ՚երթայ,



Այգի



Սերմնացան



Հնձող



37992-67

կամ հունձքէն կը դառնայ։ Գիւղակին ու գիւղին բնակիչները գլխաւորապէս հողագործութեան ու անասնաբուծութեան կը պարապին։ Կան ալ այնպիսի տեղեր որ աւելի քաղաքակրթուած են և ունին շատ գործարաններ. ատոնք կը կոչուին գիւղաքաղաք։ Հոս տուներն աւելի գեղեցիկ են, քարաշէն բնակարաններ ալ կան։



Հողագործ

1. Բացատրել անջատեալ բառերը հայերէնով։

Թելադրութիւններ. — Ուղղագրել հատուածը։

2. Գիւղակին ու գիւղին վրայ ի՞նչ գաղափար ունիք։ — Ինչե՞ր կան գիւղին մէջ։ — Գիւղացին ինչո՞վ կը զբաղի։ — Ի՞նչ է կալը, մանգա՞ղը։

3. Որոշել վերի հատուածին մէջ թէ ո՞ր բառերը իր=առարկայ և ո՞ր բառերը անձ կը ցուցնեն։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ըսէ՛ք թէ ինչի՞ կը ծառայեն խոհանոցի հետեւեալ անօթ-առարկաները. — Պտուկ, խալկին = մեծ ղազան, սան,



տապակ, թակոյկ, փարչ, աղաման, չերեփ, պնակ, սկաւառակ = թէփսի, թէյաման, շաքարաման, սրուակ = ռուղի շիշէ, դգալ, պատառաքաղ, շամփուր = շիշ, ակիշ = չէնկէլ, կողով։

## ՄՇԱԿԻ ԵՐԳ

Ահա ծագեց կարմիր արեւ,
Տաք ու պայծառ է օդը,
Դէ՛հ, քաշեցէ՛ք, սիրո՛ւն եզներ,
Առաջ տարէ՛ք արօրը։
Արտը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողին մէջ.
Սերմը ցանենք որ հունձ հնձենք,
Ցորեն դիզենք կալի մէջ։
Թէ գայ ձմեռ, մենք վախ չունինք,
Ուրախ կ'անցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունինք,
Լի և կուշտ է մեր փորը։
Դէ՛հ, քաշեցէ՛ք, սիրո՛ւն եզներ,
Շուտով վարենք արտերը։
Թող չըսեն մեր դրացիներ՝
Ծոյլ են մերին եզները։

Թելադրութիւններ. — Բացատրել չեղագիրները։
Թելադրութեամբ գրել հատուածը։

## ԱՍՈՒԾ

*Անօթութիւնը չի համարձակիր աշխատասէր մարդուն դռնէն ներս մտնել։*

---

## ՔԱՂԱՔ

*Իւրաքանչիւր կուսակալութեան մէջ կան բազմաթիւ գիւղեր ու աւաններ, բայց միայն մէկ նահանգական քաղաք կայ։ Տուները քարէ են կամ փայտէ և կղմինտրով ծածկուած են, տախտակով կամ երկաթով։ Հոս չկան ո՛չ կալ, ո՛չ կալապան, բայց շատ կրպակներ կան։ Փողոցները քարով հարթուած են և անոնց երկու կողմը կայ սալայատակ։ Քաղաքներու մէջ կան զանազան տեսակ կառքեր, որոնցմով մարդիկ կը շրջագային։ Քաղաքին առաջնորդանիստ եկեղեցին կը կոչուի*



*Մայր Եկեղեցի։ Բնակիչները արհեստներու և առևտուրի կը պարապին։ Քաղաքներ ալ կան, որոնց շրջականերն շատ գործարաններ կը գտնուին։*

*Զանազան տեսակ քաղաքներ կան, գաւառական, նահանգական, կուսակալանիստ ու արքայանիստ։ Մայրաքաղաք կը կոչուի արքայանիստ քաղաքը։*

Ելադրութիւններ. — 1. *Անջատել բառերուն սահմանը տալ։ — Ուղղագրել հատուածը։*

2. *Ո՞ր բնակութիւնը քաղաք կը կոչուի։ — Տուները ինչպէս շինուած են։ — Քաղքին մէջ ինչե՞ր կան։ — Ո՞րն է Մայր Եկեղեցին։ — Քանի՞ տեսակ քաղաք կայ։*

3. *Որոշել թէ ո՞ր բառերը անձ և որո՞նք իր կը ցուցնեն։*

Իրագիտութիւն. — *Թելադրութիւններ. — Հետևեալներուն սահմանը տուէք։*

*Ի՞նչ է եկեղեցին։ — Զանգակատո՞ւնը. — Նամակատո՞ւնը. — Իջևա՞նը. — Տո՞ւնը. — Փողո՞ցը. — Ճամբա՞ն. — Սալայատա՞կը. — Պարտէ՞զը։*

## ԱՍՏՈՒԱԾ

Մայրի՛կ, նայէ՛, ի՛նչպէս սիրուն
Են այս ծաղիկներ,
Կարմիր, ճերմակ և ոսկեգոյն,
Դաշտն է լեփ-լեցուն։
Ի՞նչ ալ անոյշ հոտ ունին, մա՛յր,
Սիրեմ ես զանոնք.
Մին է զմրուխտ, միւսը՝ գոհար,
Գոյն ունին վառ-վառ.
Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ,
Ո՞վ ցանեց այսպէս.
—Աստուած, տղա՛ս, Ա՛ն որ տուաւ
Մեզ բարիք անբաւ։
Մայրի՛կ, նայէ՛, ինչպէ՜ս աղուոր
Են այս թռչուններ.
Ունին փափուկ թեւ գունաւոր,
Հանդերձ փառաւոր։
Ծիւղէ ճիւղ կը թռչտին,
Անտառն է բուներ
Իրենց ճիւ ճիւ, ու երբ ուզեն
Կը թռչին կրկին։
—Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ
Այսպէս գեղեցիկ.
—Աստուած, տղա՛ս, Ան որ տուաւ
Մեզ բարիք անբաւ։



Մայրի՛կ, նայէ՛ ինչպէ՜ս պայծառ
Են այս աստղիկներ.
Կը զարդարեն երկնակամարն
Ու են անհամար։
Մին քան զմիւսն է լուսագեղ
Եւ մթութեան մէջ
Իբրեւ մէյմէկ վառւին կանթեղ,
Քանի՜ են շքեղ։
Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ,
Ո՞վ վառեց այսպէս.
—Աստուած, տղա՛ս, Ան որ տուաւ
Մեզ բարիք անբաւ։

## ԱՌԱԾ

Աստուած՝ աչքիդ առջեւէն
Բանէ գնա՛ չիփ չիտակ,
Մի՛ հոգար թէ քու ետեւէն
Ո՞վ կուգայ քեզ հակառակ։

Թելադրութիւններ.— Շեղագիր բառերը բացատրել։ Թելադրութեամբ գրել։

## ԿԱՂԱՆԴ

Երէկ իրիկուն մեր տունը շատ հիւրեր եկան, անոնք կը սպասէին որ Նոր Տարին դիմաւորեն։ Մինչեւ կէս գիշեր արթուն մնացի ես և առանց հագուստներս հանելու քնացայ։ Այսօր շատ կանուխ արթնցայ և ծնողքիս հետ գացի Եկեղեցի, և դարձին անոնց ձեռքն համբուրելէ ետքը՝ բարի հօրեղբօրս սենեակը վազեցի, Նոր Տարին շնորհաւորեցի եւ մաղթեցի անոր երջանկութիւն և առողջութիւն։ Հօրեղբայրս համբուրեց զիս և պատկերազարդ գեղեցիկ գիրք մը նուէր տուաւ ինծի. «Եթէ միշտ աղէկ աշխատիս, ըսաւ, այսպիսի ընծաներ շատ կ'ընդունիս ձեռքէս։» Շնորհակալութեամբ համբուրեցի անոր ձեռքը։ Որքա՜ն բարի



է իմ հօրեղբայրս. չմոռցաւ փոքր քոյրս ու եղբայրս ալ ուրախացնել։ Շուշանին ընծայեց գեղեցիկ պաճուճապատանք մը, իսկ Գարեգինին փոքրիկ թմբուկ մը. ուրախութենէն այնքան թմբուկը զարկաւ անիկա որ ձեռքերը թուլցան։

Այսօր ամէնքն ալ ուրախ են և Նոր Տարին կը շնորհաւորեն իրարու, փոխադարձ բախտաւորութիւն մաղթելով։ Մայրս նոր հանդերձներ հագցուց մեզ։ Իրիկունը հօրաքրոջս տունը պիտի երթանք։ Ես գիտեմ որ այն տեղ ալ պիտի խաղանք, երգենք ու շատ ուրախութիւններ ընենք։ Կաղանդը Յունուար մէկին կը կատարենք։

Թելադրութիւններ.— 1. Անջատեալ բառերը բացատրել.— Թելադրութեամբ գրել հատուածը։

2. Ե՞րբ եկան հիւրերը մեր տունը։— Ինչե՞ր ըրին։— Հօրեղբայրդ ի՞նչ տուաւ և ի՞նչ ըսաւ։— Ամէնքն ալ ի՞նչ էին։— Մայրդ ի՞նչ ըրաւ։— Ե՞րբ կը կատարենք Կաղանդը։

3. Քանի՞ տեսակ Անուն կայ. — Վերի հատուածին մէջ որո՞նք Յատուկ են, որո՞նք Հասարակ։

## ՕՐՕՐ ՄԱՆԿԻԿԻՆ

### ՄԱՅՐԸ Կ'ԵՐԳԷ

Քունն է եկեր իմ մանկիկիս,
Առնեմ, օրեմ զայն իմ գրկիս,
Պատմեմ վէպեր աղանիկիս,
Մինչեւ տանի քունն իմ զաւկիս։



Լոյսն է ծագեր, ատենն է ուշ,
Ա՛լ ծանրացեր աչքն իր մեղուշ,
Երգեր ըսեմ անոյշ անոյշ,
Թող քնանայ հոգիս մուշ մուշ։
Հանգչի գլխիկն իր ոսկեհեր
Սրտիս վրայ ուր կայ իր սէր,
Շոյեմ սամոյր քնքուշ մազեր,
Թող ոսկեղէն գան երազներ։



Օրօր, օրօր, մանկիկս աղուոր,
Դուն մեր պսակն ես փառաւոր.
Օրօր օրօր, սրտի՛ս հատոր,
Հայր Երկնաւոր տայ քեզ շատ օր։

Ննջէ ծաղիկն 'ի ծղօտին,
Ննջեն փոքրիկ գառներն հօտին,
Գլուխը թեւին տակ մէջ բոյնին
Ննջէ ճնճղիկ եւ աղաւնին։

Նիրհէ՛, դուն ալ իմին թռչուն,
Համբոյրիս տակ տանի քո քուն.
Հանգչիս խաղաղ մինչեւ առաւուն,
Սոխակին հետ արթննաս դուն։

## Ա Ռ Ա Ծ

Ի՞նչ բախտաւորութիւն է մանուկին համար վայելել մօրը խնամքները եւ զարգանալ անոր հոգածու գորովալից հսկողութեան տակ։

Թելադրութիւններ. — Շեղագիրները բացատրել եւ ստորագծել։

# ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքին մօտ՝ դաշտին մէջ՝ հովիւները երբ իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնը կ'ընէին, ահա Աստուծոյ հրեշտակն անոնց




քով իջաւ ու ըսաւ. «Մի՛ վախնաք, ահա՛ ձեզի մեծ ուրախութեան աւետիս պիտի տամ, այսօր Դաւթի քաղաքին մէջ ձեզի Փրկիչ մը ծնաւ։ Եւ սա՛ նշան ըլլայ ձեզի, մանուկ



մը պիտի գտնէք խանձարուրքով փաթթուած ու մսուրի մէջ պառկած։ Այս միջոցին հրեշտակները կ'երգէին «Փա՜ռք 'ի բարձունս Աստուծոյ»։ Այս փառաբանութենէն ետք հրեշտակները կրկին երկինք վերցան։ Հովիւներն արտորնօք Բեթղեհէմ եկան ու գտան Մարիամն և Յովսէփն, ու Մարիամին պատմեցին ինչպէս նաեւ շատերուն ալ։ Ամէն մարդ կը զարմանար ասոր վրայ։

Մանկան ծնելուն ութերորդ օրը անունը Յիսուս դրուեցաւ։

Թելադրութիւններ. — Անջատեալ բառերուն սահմանը տալ: — Ուղղագրել հատուածը:

2. Աստուծոյ հրեշտակն ո՞ւր և ի՞նչ աւետեց հովիւներուն: Ո՞ւր ծնաւ Յիսուս մանուկը: Հրեշտակներն ի՞նչ ըրին: Հովիւնե՞րը: Մանուկն ե՞րբ Յիսուս կոչուեցաւ:

3. Որոշել թէ ո՞րը անձ, իր, կենդանի կը ցուցնէ:

## ԵՐԳ ԾՆՆԴԵԱՆ

Օ՛ն, եկէ՛ք, տղա՛յք, օ՛ն, եկէ՛ք խմբովին,
Եկէ՛ք հոս՝ Բեթղեհէմ ու մսուրին մէջ
Եւ տեսէ՛ք այսպիսի գիշերուան մէջ
Տէր Աստուած ո՛րչա՛փ կ'ուրախանայ երկնի մէջ։
Ա՜հ, տեսէ՛ք սա աղքատիկ մսուրին մէջ
Որդին Աստուծոյ լոյսերու մէջ կը փայլի
Փաթթուած, սպիտակ, մաքուր խանձարուրքով
Եւ հրեշտակներն իրեն շուրջ կը թռչտին:
Ա՜խ, ան չոր խոտի վրայ պառկած է.
Մարիամ, Յովսէփ զմայլմամբ կը դիտեն.
Դաշտի հովիւներ ծնրադրեր՝ կ'աղօթեն,
Ու երկնքի մէջ խմբովին հրեշտակներ կ'երգեն։
Մենք ալ, ընկերնե՛ր, հովիւներուն հետ
Ծնրադրենք և ձեռք բարձրացնենք,
Եւ սկսինք մենք հրեշտակներու հետ
Բարձրաձայն երգելով զինք փառաբանենք:

Թելադրութիւններ.— 1. Շեղագիր բառերը բացատրել. —Ուղղագրել հատուածը։



## ԾԻՐ ԿԱԹԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Մայրի՛կ, ի՞նչ են երկնքի լոյսերու աս շարքը.

—Ծիր Կաթին է, տղե՛կս։

Մայրի՛կս, ի՞նչ է Ծիր Կաթին։

—Աստուածածնի ծիծին կաթկըթիկներն են, տղե՛կս։

Ինչո՞ւ լոյսեր եղած են, մայրի՛կս։

—Ա՜հ, տղե՛կս, օր մը Բեթլեհէմի ծըծմարերու կաթը փախաւ, Աստուածածին անոնց մանկիկներուն մեղքընալով, կաթիկ տուաւ որ անօթի չմեռնին։

Ինչո՞ւ փախաւ ծծմարերու կաթը, մայրի՛կս։

—Ա՜հ, տղե՛կս, մեր Չար կայը ծծմարերու խմած ջուրը հմայեց, որպէս զի Աստուածածնի կաթն ալ փախի, և Յիսուս մանուկն ալ կաթով չապրի — մեռնի։

Յետոյ ի՞նչ եղան մանկիկները։

—Երբ նահատակուեցան, անոնց արիւնները կաթ եղած էին, և արիւնէ կաթ եղած կաթի կաթիլները լոյսի փոխուելով՝ երկինք թռան, հոն խումբ խումբ եղան ու ըսուեցան «Ծիր կաթին»։

Հոն ի՞նչ կ'ընեն հիմա անոնք, մայրի՛կս։

— Երկինքէն քեզի պէս խեղճիկ տղեկներու կը նային, որ անոնց աչերուն լոյս տան լո՜յս։

Մայրի՛կ, ամէն ատեն հո՞ն են։

— Չէ՛ տղե՛կս. հիմա երկինքէն վար կ'իջնեն ու ժամ կուգան, տղե՛կս։ «Փառք ի բարձունս» կ'ըսեն, և իրենց նայող մանկիկներուն մանրիկ աչուկներուն լուսիկ կուտան, տղե՛կս, լուսի՜կ։

Ինծի ալ լուսիկ կուտա՞ն, մայրի՛կս։

Այո՛, տղե՛կս, այո՛, թէ որ դուն ալ ժամ երթաս և այդ լոյսերուն նայիս։

Երթանք, ժամ երթանք, մայրի՛կս, որ ալ լոյս առնում, լո՜յս։

—Երթանք, տղե՛կս, ժամ երթանք. հոն այդ լոյսերուն մէջ է քու մեծ-մամիկդ, լոյս-մամիկդ, հաճի խաթուն մամիկդ, ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԸ։ Եւ հրեշտակային ձայներ կը լուէին ժամուն մէջ, երբ մայր և որդի հոն կը մտնէին։

«Փա՜ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն, և օրհնութիւն»։

Թելադրութիւններ. — Հարցումներով բացատրել չեզագիրները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ինչի՞ կը ծառայեն հետեւեալ փայտէ առարկաները։ — Ո՞ւր կը գտնուին։

Նստարան, աթոռ, քանոն, դուռ, պատուհան, տախտակամած, օրօրոց, դարան, գրատախտակ։

---



## "ՀԱՅՐ ՄԵՐ"

— «ՀԱՅՐ ՄԵՐ—, ըսած չե՞մ որ ամէն ատեն<br>
Ծայրէ ծայր ու շուտ կ'ըսեն կ'աւարտեն,<br>
Ինչո՞ւ կ'ընդհատես զայս, փոքր անզգամ,<br>
Սկսէ՛, սկսինք, միտ դիր այս անգամ...»։<br>
— «Հայր մեր, որ յերկինս ես, որպէս յերկրի,<br>
Սուրբ եղիցի միշտ անուն քո բարի,<br>
Արքայութիւն քո եկեսցէ, քո կամք<br>
Եղիցին յերկինս և յերկրի ուր կամք։<br>
— «Տո՛ւր մեզ այսօր ըզհաց...»<br>
— «Զհաց ինչո՞ւ մռլտաս կամաց,<br>
Ճիշտ մէջտեղն ինչո՞ւ կանգ կ'առնես նորէն,<br>
Բան չեմ հասկնար ես այդ բառերէն։<br>
— «Մա՛յր, մի՛ բարկանար, հացն որ ամէն օր<br>
Աստուած կուտայ մեզ՝ է ցամաք ու չոր,<br>
...Երբ «Հայր մեր» կ'ըսեմ, կը խնդրեմ արագ<br>
Որ մեզ՝ հացին հետ՝ տայ քիչ մ'ալ... կարագ»։

## ԱՋԱՏԱՐԱՐԸ

Սառած գետին վրայ Անայիս իր եղբօրը հետ կը խաղար։ Յանկարծ սառոյցը կը կոտրի, կը բացուի փոքրիկ

աղջկան ոտքին տակ, և պզտիկն ինքզինքը ջուրին մէջ կը գտնէ։ Գլուխն ու թևերը դեռ դուրսն են։ Սառոյցի կտորին կը կառչի, իր եղբայրը օգնութեան կը կոչէ, բայց ան խելքը կորսնցուցած՝ կը ձգէ կը փախչի, սուր ճիչեր արձակելով։ Անոյխս գիտէ թէ գետը խորունկ է, և թէ պիտի թաղուի հոն պաղ ջուրին խորը, հօրմէն մօրմէն հեռու։ Բայց ահա հաւատարիմ շունն է որ կը վազէ կուգայ, կ'երկնցնէ թաթերը փոքրիկ տիրուհիին որ անոնց փաթթուելով վեր կ'ելլէ ու կ'ազատուի։

Թելադրութիւններ. — Անծանօթ բառերը բացատրել։ Թելադրութեամբ գրել։ Որոշել անունները։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ինչի՞ կը ծառայեն հետևեալ երկաթէ առարկաները և ո՞ւր կը գտնուին. Վառարան = սօպա, կրակարան, կացին, ուրագ, բանլիք, նիգ, կղպանք, մուրճ, մկրատ, աքցան = քէրփէթէն, գայլիկոն = պուրղու, սղոց, սալ = էօրս, պայտ, ասեղ, բահ, բրիչ, մանգաղ, գերանդի = թըրփան, յատոցիկ = պուտայըճը պըչաք։



## ՄԱՅՐԻԿՍ

Ո՞վ կերակրեց զիս տալով ծիծ անոյշ,
Ո՞վ առաւ իր գիրկն որ ննջեմ մուշ մուշ,
Իմ վարդ երեսիս ծաղիկներ թափեց.
Մայրիկս։

Երբ իմ աչերէս փախաւ քուն գնաց,
Ո՞վ ինձ անուշիկ օրօրներ տուաց,
Եւ թևերուն մէջ օրեց որ չլամ.
Մայրիկս։



Ո՞վ նստաւ հսկեց իմ մատաղ գլխուն,
Երբ մէջ օրրանիս ննջէի սիրուն,
Եւ սիրոյ քաղցրիկ արցունքներ թափեց.
Մայրիկս։

Երբ կծու ցաւով կուլայի ես միշտ,
Ո՞վ իմ աչք սրբեց, թեթեւցուց իմ վիշտ,
Ահ ու դող ընդգաց որ ես չմեռնիմ.
Մայրիկս։

Ո՞վ վազեց օգնել երբ ես ընկայ վար,
Եւ պատմեց ինձ վէպ՝ որ լինի ինձ ճար,
Պագաւ ցաւած տեղն որ տանի դարման.
Մայրիկս։

Ո՞վ աղօթք ուսուց իմ բերնիս քնքուշ,
Որ պաշտեմ զԱստուած, ըլլամ միշտ զգոյշ,
Եւ խելքով շնորհքով իմ կեանք անցունեմ.
Մայրիկս։

Եւ կրնա՞մ երբէք մոռնալ քեզ, հոգի՛ս,
Դու որ սիրեցիր և հոգացիր զիս,
Եւ այնչափ ցաւեր առ ոչինչ դրիր,
Մայրի՛կս։

Ո՜հ այդպիսի բան մաքէս չի անցնիր,
— Եւ դու, ո՛ Աստուած, իմ արեւ պահիր,
Յուսամ վարձատրել քո անբաւ հոգեր,
Մայրի՛կս։

Իսկ երբ դառնաս դու տկար պառաւուկ,
Իմ հզօր բազուկ քեզ լինի նեցուկ,
Եւ պիտի սփոփեմ բոլոր քու ցաւեր,
Մայրի՛կս։

Եւ երբ տեսնեմ որ գլուխդ ծռի,
Ես պիտի հսկեմ քու մօտ մնարի,
Եւ սրտիս խորէն պիտ՚արտօսր թափեմ,
Մայրի՛կս։



## ԱՌԱԾ

Երախտագէտ ըլլանք մեր ծնողքին և ջանանք փոխարինել անոնց անձնուիրութիւնն ու զոհողութիւնները։

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիրները, թելադրութեամբ գրել։

Ընտանիքի անդամներ. — Թելադրութիւններ. — Կրնա՞ք սահմանը տալ հետեւեալներուն։ Հաւ հաւու = պապուն պապ, հանւոյ հանի, հաւ = մեծ հայր, հանի = մեծ մայր = մամ, հայր, մայր, եղբայր, քոյր, քեռայր = էնիշտէ, տագր, աներձագ, քենեկալ, մօրու = խորթ մայր, կեսուր, զոքանչ, հօրու = խորդ հայր, ուրջու = խորդ տղայ, տալ, ներ, քենի, նու, որդեգիր, թոռն, քեռորդի, հօրեղբայր, մօրեղբայր, եղբօրորդի, հօրաքեռորդի, մօրաքեռորդի։

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Յիսուս մանուկը ծնունդէն քառասուն օր ետք Երուսաղէմ՝ Տաճարը բերին Մովսէսի օրէնքին համաձայն։ Երուսաղէմի մէջ Սիմէոն անուն բարի ծերունի մը կար։ Ասոր յայտ-

նուած էր թէ իր մեռնելէն առաջ պիտի տեսնէր Մեսիան։

Նոյն օրը Ս. Հոգիէն ներշնչուելով՝ Տաճարն եկաւ և Յիսուս մանուկը իր գիրկն առնելով՝ ըսաւ. «Ա՛լ հիմայ, ո՛վ Տէր, արձակէ՛ քու ծառադ խաղաղութեամբ, քու խօսքիդ համեմատ աչքերս տեսան փրկութիւնդ»։



Աննա անունով ծեր Մարգարէուհի մըն ալ եկաւ անոնց քով ու Աստուծոյ փառք կուտար և անոր վրայօք կը խօսէր Երուսաղէմի մէջ փրկութեան սպասողներուն։



Յիսուսի այս Տաճար գալը կը կոչուի Ընծայումն կամ Տեառնընդառաջ որուն նախատօնակի իրիկունը մոմեր կը վառենք։

Թելադրութիւններ. — 1. Յիսուս մանուկն ե՞րբ Երուսաղէմ տարին։ Ինչո՞ւ։ Հոն ո՞վ կար։ — Ի՞նչ ըրաւ։ — Աննա մարգարէուհին ի՞նչ ըրաւ։ — Ո՞ր տօնը կը կոչուի Տեառնընդառաջ։

2. Անջատել բառերը բացատրել։ — Ուղղագրել, որոշել Յատուկ ու Հասարակ Անունները։

## ՀԱՆԵԼՈՒԿ

Ինքը նաւ մը,
Կը լեցնէ տուն մը։
(Ճրագ)

## ՅԱՋՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ

Յակոբ և Պետրոս, երկու գիւղացիներ, օր մը բանջարանոցի մը քովէն կ'անցնէին՝ գլուխ գլխի խօսակցելով իրարու հետ։ «Նայէ՛, ըսաւ յանկարծ Յակոբ իր ընկերոջը, սա՛ կաղամբ-

ները որքա՜ն խոշոր են։ — Ատոնք ալ բա՞ն են, պատասխանեց Պետրոս հեգնութեամբ. ես անանկ կաղամբ մը տեսած եմ, որ մեր գիւղին զանգակատան չափ կար։» Յակոբ որ կաթսայագործ էր, ուզելով անոր բերնին չափը տալ, անմիջապէս ըսաւ. «Ես ալ ժամանակաւ մեր եկեղեցիին չափ կաթսայ մը շինած եմ։ — Բայց այդ ահագին կաթսան ինչո՞ւ համար շինել տուիր։ — Կաղամբդ մէջը եփելու համար անտարակոյս,» յարեց սրամիտ երիտասարդը։

Թելադրութիւններ. — Անջատեալ բառերը բացատրել։ Թելադրութեամբ գրել հատուածը։ Որոշել անունները։



## ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յիսուս երբ երեսուն տարեկանի մօտ եղաւ, Գալիլիայէն Յորդանան գետն եկաւ որ Յովհաննէսէն մկրտուի։ Բայց Յովհաննէս



զայն կ՚արգիլէր և կ՚ըսէր. «Ե՛ս քեզմէ մկրտուելու եմ, դո՞ւն կուգաս ինծի»։ Յիսուս պատասխանեց. «Հիմա այսպէս կը վայելէ մեզի»։ Յիսուս եր-

բոր մկրտուեցաւ, ջուրէն դուրս ելաւ ու աղօթ.ք կ'ընէր։ Ահա երկինքը բացուեցաւ և Յովհաննէս տեսաւ որ Աստուծոյ Հոգին իբրև աղաւնի կ'իջնէր ու կուգար անոր վրայ. երկինքէն ալ ձայն մը կ'ըսէր. “Ասիկա է սիրելի Որդիս որուն հաւնեցայ”։

Այնուհետեւ Յիսուս անապատը առանձնացաւ, քառասուն օր քառասուն գիշեր ծոմ պահելէն ետք անօթեցաւ։

Սատանան Յիսուսի մօտենալով ըսաւ. “Եթէ դուն Աստուծոյ որդին ես, ըսէ որ աս քարերը հաց ըլլան”։ Յիսուս պատասխանեց. “Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ այն ամէն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ”։

Յիսուսի մկրտութիւնը կը տօնենք Ս. Ծննդեան հետ, և նոյն առտուն Ջրօրհնէք ալ կը կատարենք։



Թելադրութիւններ. — 1. Յիսուս ե՞րբ, ո՞ւր և ո՞ւրկէ մկրտուեցաւ։ — Յովհաննէս ի՞նչ ըրաւ։ — Յիսուս ի՞նչ պատասխանեց։ — Մկրտուած ատեն ինչե՞ր տեղի ունեցան։ — Յիսուս ո՞ւր առանձնացաւ։ — Ինչե՞ր ըրաւ։ — Սատանան ի՞նչ ըսաւ։ — Յիսուս ի՞նչ պատասխանեց։—Ո՞ր տօնը կը կոչուի Ջրօրհնէք։

2. Անջատել բառերը բացատրել։ — Հատուածը ուղղագրել։

3. Որոշել Յատուկ և Հասարակ Անունները։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ինչի՞ կը ծառայեն հետեւեալ կաշիէ առարկաները.

Կօշիկ, մոյկ, սանձ, տրեխ, խրաց = ղըրըճ ղայըշ, թամբ, պայուսակ, փքոց = քէօրիւկ, փոկ։

Ո՞ւրկէ կը պատրաստեն այս առարկաները։ — Ի՞նչ կը կոչուի կաշին պատրաստողը։

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Իրազննական = Դէմ յանդիմանական Թելադրութիւններ



1. Դասխարակութիւն. — Ի՞նչ նպատակաւ դպրոց կուգաք. — Որո՞նք են բարի դպրոցականի մը ձիրքերը. — Ի՞նչ չարժուձեւ ունենալու է դպրոցականը. — Ի՞նչ կ'ընէ դասախարակութիւն։

## ԵՐԵՔ ՏԵՍԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Մեր բոլորտիքը շատ տեսակ մարմիններ կը տեսնենք։ Ասոնք երեք կարգի կը բաժնուին, կենդանիներ, բոյսեր, հանքեր։

Կենդանային կը կոչուին կենդանիներէ առնուած իրը, ինչպէս մեղր, ոսկոր, կաթ, մորթ։ Բոյսերէ հանուած մարմինները բուսային կը կոչուին, ինչպէս բամպակ, ձէթ, փայտ։ Հանքային են քարերը, մետաղները, ջուրը։

Կենդանին ու բոյսը կը ծնին, կ'աճին ու վերջը կը մեռնին իրենց նմանը յառաջ բերելով. ուրեմն կեանք ունին։ Հանքայինները ո՛չ կը ծնին, ո՛չ կ'աճին և ո՛չ կը ջնջուին, ուրեմն կեանք չունին։

Կենդանիները գործարան ունին — աչք, ականջ, թոք, ստամոքս,



եւայլն. ասոնց միջոցաւ կ'ապրին կենդանիները։ Բոյսերն ալ գործարան ունին, արմատ, տերեւ, ծաղիկ, եւայլն. ասոնց միջոցաւ կ'ապրին բոյսերը։ Կենդանիներն ու բոյսերը կը կոչուին գործարանաւոր մարմին։ Հանքայինները գործարան չունենալով՝ չեն ապրիր, և կը կոչուին անգործարանական մարմին։ Կենդանիները կ'զգան ու կը շարժին, իսկ բոյսերը չեն զգար ու չեն շարժիր. ահա այս երկուքին տարբերութիւնը։

Թելադրութիւններ. — 1. Քանի՞ տեսակ մարմիններ կան։ — Որո՞նք կենդանական են։ — Բուսակա՞ն։— Հանքայի՞ն։ — Կենդանիներն ու բոյսերն ի՞նչ կ'ըլլան։ — Ուրեմն ի՞նչ ունին հանքայինները։ — Կենդանիներն ի՞նչ ունին։— Ասոնց միջոցաւ ի՞նչ կ'ընեն։ — Բոյսերն ալ ունի՞ն գործարան։ — Որո՞նք չունին։ — Որո՞նք են գործարանաւոր մարմինները։ — Անգործարանաւորնե՞րը։

2. Անջատեալ բառերը բացատրել։ — Հատուածն ուղղագրել։

3. Ո՞ր բառերը անձ, կենդանի, իր կը ցուցնեն։

Որո՞նք են իրերը, գործարանաւո՞ր թէ անգործարան մարմինները։

### ԱՌԱԾ

Գիտութեամբ զարդարէ միտքդ,
Ան պիտի տայ բանականութեանդ լոյսը։

---

## ԱՐՁԱԳԱՆԳ

Արամ չէր գիտեր տակաւին թէ արձագանգն ի՛նչ էր։ Օր մը, որ դաշտը ելած էր, սկսաւ գոչել.

— Հօ՛, հօ՛, հօ՜։

Անմիջապէս մօտիկ անտառէն նոյն ձայնը լսեց։

Տղան զարմանալով սկսաւ գոռալ և գոչեց.

— Ո՞վ ես դուն։

Ձայնը պատասխանեց։

— Ո՞վ ես դուն։

Արամ բարկացաւ և զայրացմամբ ըսաւ.



— Դուն անպիտան տղայ մ'ես։

— Անպիտա՛ն տղայ, կրկնեց ձայնը անտառին խորէն։

Ա՛լ աւելի զայրացած՝ Արամ նախատական խօսքերը կրկնապատկեց, զորոնք արձագանգն իրեն վերադարձուց ճշգիւ։

Բարկութեամբ լեցուած՝ բոլոր անտառը պտըտեցաւ, մացառներուն մէջ փնտռելով պզտիկ տղան, զոր հոն պահուըտած կը կարծէր, որպէս զի վրէժը առնէ։ Սակայն բնականաբար ոչ ոք գտաւ հոն։

Այս արարքին խուզարկութենէն ետքը, Արամ տուն դարձաւ ու իր մօրը պատմեց թէ չար տղայ մը անտառին մէջ պահուըտած էր և զինքն անարգած։ Մայրը պատասխանեց.

— Զաւա՛կս, դուն ինքզի՛նքդ կ'ամբաստանես, քանզի խակ և խակ խօսքերդ

լսեցիր։ Ինչպէս որ յաճախ քու պատկերդ ջրին մէջ տեսած ես, նմանապէս լսեցիր քու բնական ձայնիդ հնչումը։ Եթէ սիրուն խօսքեր ըսած ըլլայիր, սիրուն խօսքեր լսած պիտի ըլլայիր։

Թելադրութիւններ. — 1. Նկարագրել Արամին, արձագանգին պատասխանները։

2. Բացատրել անջատեալ բառերը։ — Թելադրութեամբ գրել։

3. Որոշել Յատուկ Անուններն ու Հասարակ Անունները։

## ՓՈԽԱԴԱՐՁ ԴԱՍ

Յակոբ անունով պզտիկ սպասաւոր մը իր տէրոջը կողմէն ստէպ որսեր ու պտուղներ նուէր կը տանէր ծեր, ագահ հասառուի մը, որ փոքրիկ պարգեւ մը անգամ չէր տար անոր։ Օր մը տղան նապաստակ մը տարաւ ու առանց բարեւելու. «Ա՛ռ սա նապաստակը», ըսաւ։ — Ստահա՛կ, գոչեց ծերուկը բարկութեամբ, ատա՞նկ



կ'ընեն». ապա հրամայեց որ իր տեղը նստի, եւ ինք նապաստակը ձեռքը առնելով՝ քաղաքավարութեամբ կամաց կամաց առաջ եկաւ ու յարգանքով բարեւելով, ըսաւ. «Պարո՛ն, այս նապաստակը տէրս ղրկեց ձեզի, խնդրելով որ ընդունելու պատիւը ընէք»։ Այն ատեն Յակոբ ափթոփին մէջ երկննալով. «Շնորհակալ եմ, տղա՛ս» պատասխանեց, եւ ձեռքը գրպանը խոթելով՝ յարեց. «Ա՛ռ քեզի մէճիտ մը ու գնա՛ կենացս գաւաթ մը պարպէ»։

Թելադրութիւններ. — Հարցումներ ուղղել։ Թելադրութեամբ գրել հատուածը։ Որոշել Անունները։

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Իրաշխնական = Դէմ յանդիմանական

Թելադրութիւններ. — 2. Գիրք. — Դպրոցականի մը գլխաւոր գիրքերն որո՞նք են. — Ի՞նչ խնամք պէտք է ունենալ գիրքերու մասին. — Ի՞նչ նշանով կը ճանչցուի բարի դպրոցականը։

## ՏԱՍՆԱԲԱՆԵԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ



Առողջապահութիւնն աշխարհի բարիքներուն ամենամեծն ու գլխաւորն է։ Ուստի միտքդ պահէ՛ հետեւեալ կանոնները.

1. Զափազանց ուտելէ ու խմելէ և ամեն տեսակ շուայտութենէ զգուշացի՛ր։

2. Անմարսելի կերակուրներ մի՛ ուտեր։

3. Կեցած տեղդ, գործելու և պառկելու սենեակդ միշտ մաքուր օդ գտնուի։ Ամառը միշտ, իսկ ձմեռը ստէպ պատուհանը բա՛ց։

4. Ցանկարծական ցրտութենէ զգուշացի՛ր։



5. Քրտնած միջոցիդ պաղ ջուր մի՛ խմեր։

6. Սաստիկ տաքութենէ զգուշացի՛ր։

7. Զգայարանքդ չափաւոր գործածէ։ Մութին մէջ կամ շատ նուրբ աշխատութիւններով աչք մի՛ յոգնեցներ։

8. Ուժէդ վեր գործ մի՛ ըներ. ծանր բան մի՛ վերցներ։

9. Քեզի չվերաբերող գործերու ու ախներու մէջ մի՛ նետուիր։

10. Եթէ առողջութիւնդ խանգարուի, բժիշկի դիմէ՛ անյապաղ և անոր խրատին անսա՛։

Թելադրութիւններ. — 1. Ո՞րն է ամենէն մեծ բարիքը։ — Որո՞նք են առողջապահութեան Տասնաբանեայ Պատուիրանքը։ Ա՞.ը, Բ՞.ը, Գ՞.ը։ Դ՞.ը, Ե՞.ը։ Զ՞.ը, Է՞.ը, Ը՞.ը, Թ՞.ը, Ժ՞.ը։

2. Բացատրել անջատեալ բառերը։ — Հատուածը ուղղագրել։

3. Ո՞ւր կ'ըսուի բայ։

Որոշել բայերը այս հատուածին մէջ։

## ՀԱՆԵԼՈՒԿ

Տուն մը ունիմ
Քակուիլը կայ,
Շինուիլը չկայ։ (Հաւկիթ)

## ԱՌԱԾ

Առողջութիւնը հարստութիւն է։
Առողջ միտք առողջ մարմնի մէջ։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ինչի՞ կը ծառայեն հետեւեալ կտաւէ առարկաները. շապիկ, վարտիք, սաւան, սփռոց, ղենջակ, վարագոյր, թաշկինակ, պարկ։ Ուրկէ՞ կը շինուին կտաւէ առարկաները. մինակ կտաւէ՞ թէ վուշէ ալ, բամպակէ ալ. — Ո՞ւր կը ցանեն կանեփին, վուշին, բամպակին սերմերը. ի՞նչ կը կոչուի կտաւեղէն շինողը։

## ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՂՈՑ

1. Ամէն առաւօտ, արեւուն լուսով
Իսկոյն անկողնէդ դուրս պիտի ցատկես,
2. Երեսդ ու ձեռքերդ՝ առատ պաղ ջրով
Պիտ՝ անհրաժեշտ լուաս ու սրբես։
3. Նոյն օրուան դասերդ ուշադիր մտքով
Պիտի վերստին հեգես ու սերտես.



4. Յետոյ անդանդաղ և ուրախ դէմքով
Ուղղակի պիտի դպրատուն վազես։
5. Հոն, ակնածանքով և անկեղծ սիրով,
Պիտի վարժապետդ յարգես ու պատուես։
6. Հնազանդութեամբ, անդուլ, անխռով,
Անոր պատուէրն պիտի կատարես։
7. Եւ՝ բնաւ երբէք՝ ձայնով ու խօսքով՝
Չպիտի դասին խանգարում առթես։
8. Տետրակդ ու գրքերդ ալ մեծ խնամքով
Պիտի անաղարտ և մաքուր պահես։
9. Եւ քեզ բարեկամ լաւ որոշելով
Բարի տղոցմէ միայն պիտ՝ ընտրես։
10. Ամէն իրիկուն ղոխկ ու շուտով
Դպրոցէն շիտակ տուն պիտի դիմես։

## ԱՌԱԾ

Սիրելի ըլլալու գլխաւոր միջոցներէ մէկն է բարեկրթութիւնը։

Դպրոցը բարոյական դարբնոց մըն է ուր կը կոփուի մանուկին միտքը։

Թելադրութիւններ. — Շեղագիրները բացատրել. — Թելադրութեամբ գրել։

## ՄԱՐՄԻՆԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՎԷՃԸ

Օր մը մարդուն անդամներն իրարու ծառայելէ ձանձրանալով՝ ա՛լ իրենց պաշտօնը կատարել չուզեցին։

Ոտուըները կ'ըսէին. — «Ինչո՞ւ միայն մենք պիտի կրենք ուրիշներուն բեռը. ձեզի համար ոտուըներ գտէք, եթէ քալել կ'ուզէք»։

Ձեռուըները կ'ըսէին. — «Ինչո՞ւ ուրիշներուն համար միայն մենք աշխատինք. եթէ ձեզի ձեռք պէտք է, դուք ձեզի ձեռք շինեցէք»։

Բերանը մրմռաց. — «Իրաւ, ես շատ խենդ եմ եղեր որ ստամոքսին համար սնունդ կը ծամեմ, որպէս զի հանգիստ հանգիստ մարսէ. այն որ բերանի պէտք ունի, թող բերան գտնէ»։

Աչուըներն ալ չուզեցին ամբողջ մարմինին վրայ հսկել։ Միւս անդամ-



ներն ալ այսպէս խօսեցան և ա՛լ իրենց պաշտօնը չկատարեցին։

Ի՞նչ եղաւ հետեւանքը։

Ամբողջ մարմինն հետզհետէ սկսաւ տկարանալ մաշիլ։

Անդամները տեսնելով որ իրենց կորուստը մօտ է, յանցանքնին ճանչցան և առաջուան պէս իրարու ծառայել սկսան։

Թելադրութիւններ. — Բարոյական մը։ Թելադրութեամբ գրել։

---

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Իրազննական — Դէմ յանդիմանական



Թելադրութիւններ. — 3. Դասարան. — Ի՞նչ առարկաներ կան դասարանին մէջ. — Թանաքը ի՞նչ բանի կը գործածուի. — Կաւի՞ճը. — Գրատախտա՞կը. — Գրասեղա՞նը. — Աշխարհացո՞յցը. — Գրի տախտակնե՞րը։

---

## ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի մեռած օրը շաբաթ-օրուան նախընթաց ուրբաթ օրն է։ Իրիկունը եկաւ Արեմաթացի Յովսէփն և Պիղատոսի հրամանաւ Յիսուսի մարմինը խաչէն վար առաւ և



թաղեց իր անձնական պարտէզին մէջ։ Գերեզմանին դուռը մեծ քար մը զետեղեցին։ Անոր ետեւէն գացին Գալիլիացի կիներն և գերեզմանին դիմացը նստած՝ տեսան թէ ուր



և ինչպէս անոր մարմինը ամփոփուեցաւ։

Շաբաթին հետեւեալ օրը առտուանց Տիրոջը հրեշտակը երկինքէն իջնելով՝ գերեզմանին դռնէն մէկդի գլորեց քարը և անոր վրայ նստաւ։ Նոյն օրը առտուն կանուխ Մարիամ Մագդաղենացի, Մարիամ Կղէովպեան ու Սողոմէ գերեզման եկան Յիսուսի մարմինը օծելու համար։ Ի՛նչ տեսնեն, Յիսուս յարութիւն առած էր։ Յիսուս Մարիամ Մագդաղենացւոյն երեւցաւ, աս ալ պատմեց աշակերտներուն, բայց անոնք հաւատալ չուզեցին։

Թելադրութիւններ. — Թելադրել ու բացատրել անջատեալ բառերը։ Որոշել Անուններն ու Բայերը։

## ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ

Դաշտերու մէջ ձիւնն հալեցաւ,
Կենդանարար սիւքն սկսաւ,
Սառնամանիք, հով ձմեռուան
Կարճ միջոցին անյայտացան ։
Բերկրութիւն է ամեն մարդոյ
«Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց» ։
Բազմութիւնը մեծ ու փոքր
Ժողովեցան եկեղեցին,
Հարսն ու աղջիկ զարդարուեցան
Իրենց ծաղիկ գարնանային :
Բերկրութիւն է շա՜տ, շա՜տ մարդոյ
«Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց» ։
Եկեղեցւոյն մէջ վիզը ծռած,
Հագուստները պատառոտած,
Քարի վրայ, ոտքը բոպիկ,
Տեսէ՛ք, տեսէ՛ք ո՛վ է կանգնած.
— Աղքատն է այն, սոված քաղցած,
Մխիթարե՛նք, եղբա՛յր, մենք զայն.
«Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց» ։

### ԱՌԱԾ

Որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ ։

*
* *



Հարուստին ողորմութիւնը՝ աղքատին օրհնութիւնը ։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ինչի՞ կը ծառայեն հետեւեալ քարէ առարկաները.

Պատ, սանդուղ, կամար, աշտարակ, կամուրջ, արձան, տապանաքար, երկանաքար, յեսան, ծխան, հնոց = ֆուրուն, քարայատակ = տէօշէմէ, սալարկ = ղալտըրըմ ։

### ԺՐԱՋԱՆՈՒԹԻՒՆ

Մանուկ մը պատուհանին առջեւ նստած՝ իր դասերը կը պատրաստէր, մինչ փայլուն արեւը դրսէն զինք կը հրաւիրէր. “Բաւական չէ՞ ինչ որ կարդացիր, ոտքի ելիր, խաղերդ սկսէ„ ։ Իսկ տղան արեգական պատասխանեց. “Ո՛չ, պայծառ արեւո՛ւկ, ո՛չ, հիմա խաղալու միջոց չունիմ, թո՛ղ որ առաջ դասս վերջացնեմ ։„

Մանուկը կը գրէ և կը կարդայ. պատուհանին տակ ճիւղին վրայ նստած սիրուն թռչնիկը կ'երգէ և միշտ

այսպէս կ'ըսէ. «Բաւական չէ՞ ինչ որ կարդացիր, ոտքի ելիր, խաղերդ սկսէ»։ Իսկ մանուկը Թռչնիկին կը պատասխանէ. «Ո՛չ, սիրո՛ւն Թռչնիկս, ո՛չ, Հիմայ խաղալու միջոց չունիմ. Թո՛ղ որ գործս աւարտեմ»։

Մանուկը կարդաց ու գրեց, բոլոր գործերը վերջացուց, գիրքերը դարակին մէջ դրաւ, և դէպի պարտէզ վազեց և համարձակ ձայնով գոչեց. «Ո՞վ է զիս հրաւիրողը»։ Արեգակն այն ատեն անոր համար աւելի գեղեցիկ կը փայլէր, փոքրիկ Թռչունին երգն ալ աւելի զմայլելի կ'երեւար։

### ԱՌԱԾ

Գործ մը թեթեւօրէն դատելու չէ։

Թելադրութիւններ. — 1. Մանուկ մը ի՞նչ կ'ընէր պատուհանին առջեւ։ — Արեւն ի՞նչ ըսաւ։ — Մանուկը ի՞նչ պատասխանեց։ — Թռչնիկն ի՞նչ ըսաւ։ — Մանուկն երբ դասը լմնցուց, ի՞նչ ըսաւ։ — Ի՞նչ բարոյական կրնաք քաղել։



2. Բացատրել անջատեալ բառերը։ — Ուղղագրել հատուածը։

3. Որոշել ենթականերն։ — Բայերը։ — Ո՞ր Անունները կրնան ենթակայ ըլլալ։ — Այս հատուածին մէջ ո՞րը անձ, ո՞րը ենթակայ, ո՞րը կենդանի ենթակայ, ո՞րը իր ենթակայ է։

## ՈՂՆԱՅԱՐԱՒՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Կենդանիներէն ոմանք կմախք ունին և կը կոչուին ողնայարաւոր, ուրիշներ ալ չունին և կը կոչուին անողնայար կենդանի։ Ողնայարաւորները հինգ խումբ են.

1. Անոնք՝ որ ձագերնուն կաթ կուտան և կը կոչուին ստնաւոր։ 2. Այն ողնայարաւորներն՝ որ փետուրով ծածկուած են, թռչելու թեւեր ունին, իրենց բերնին ծայրը կտուց ունին, նաեւ հաւկիթ կ'ածեն՝ կ'ըսուին թռչուն։ 3. Անոնք որ պաղ մարմին ունին, հաւկիթ կ'ածեն

և գետնի վրայ կ'ապրին միշտ, կ'ըսուին ս ո ղ ո ւ ն ։ 4. Անոնք որ պաղ արիւն ունին, հաւկիթ կ'ածեն, բայց թէ՛ ջուրի մէջ կ'ապրին և թէ՛ ցամաքի վրայ, կ'ըսուին գ ո ր տ ա զ գ ի ։ 5. Այն ողնայարաւորները, որ պաղ արիւն ունին ու հաւկիթ կ'ածեն, թ ե փ ունին և միշտ ջուրի մէջ կ'ապրին և հոն կը լողան լ ո ղ ա կ ն ե ր ո վ, կ'ըսուին ձ ը կ ն ա զ գ ի ։

### ՈՂՆԱՅԱՐԱՒՈՐՆԵՐ

| | |
|---|---|
| Ստնաւոր . . . . . . . | Ոչխար |
| Թռչուն . . . . . . . | Սոխակ |
| Սողուն . . . . . . . | Օձ |
| Գորտազգի . . . . . . | Գորտ |
| Ձկնազգի . . . . . . . | Տառեխ |



Ոչխար



Սոխակ





Օձ



Գորտ



Տառեխ

Թելադրութիւններ.—1. Կենդանիները քանի՞ խումբի կը բաժնուին։— Որո՞նք են ստնաւորները.— Որո՞նք են սողունները։— Որո՞նք են գորտազգիները։— Որո՞նք են ձկնազգիները։— Օրինակներ։

2. Բացատրել անջատեալ բառերը։ Հատուածը ուղղագրել։

3. Որոշել Անունները։

### Ա. Ռ Ա. Ծ

Ամբար մը ունիմ
Մէջը չիկ տաշեղ
(Ակռայ)

## ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Յիսուս իր չարչարանքներէն ետքը ինքզինք իր աշակերտներուն կենդանի ցուցուց շատ ապացոյցներով,



քառասուն օր անոնց երեւնալով ու Աստուծոյ արքայութեանը վրայ խօսելով։ Վերջին անգամ զանոնք



Ձիթենեաց լերան վրայ հաւաքեց և պատուիրեց որ Երուսաղէմէն չհեռանան, սպասեն Հօր խոստման։ Ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրհնեց զանոնք։ Եւ ապա անոնցմէ բաժնուեցաւ և վեր ելաւ։ Ամպ մը զայն անոնց աչքէն ծածկեց։ Եւ երբ անոր ետեւէն կը նայէին, և ահա հրեշտակները ըսին. — Ո՛վ Գալիլիացիներ, ինչո՞ւ կեցեր դէպի երկինք կը նայիք, Յիսուս ձեզմէ երկինք համբարձաւ —։

Զատկի տօնէն յիսուն օր ետք կամ Քրիստոսի համբարձումէն տասն օր վերջ, Հրէաներուն Պենտեկոստէին, մինչ աշակերտներն ամէնքը միասին էին, յանկարծ Ս. Հոգին երեւցաւ անոնց և ամէնքն ալ Ս. Հոգւով լեցուեցան և սկսան տարբեր լեզուներով քարոզել։

Թելադրութիւններ. — 1. Յիսուս իր յարութենէն ետք քանի՞ օր երեւցաւ իր աշակերտներուն: — Ինչե՞ր պատուիրեց: — Ո՞ւր տարաւ զանոնք: — Ի՞նչ եղաւ: — Ս. Հոգին ե՞րբ իջաւ:

2. Անջատեալ բառերը բացատրել: — Հատուածն ուղղագրել: — 3. Ի՞նչ է նախադասութիւնը:

Այս հատուածին մէջ քանի՞ նախադասութիւն կայ: Գիծերով որոշել:

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ըսէք թէ ինչի՞ կը ծառայեն հետեւեալ հողէ = կաւէ առարկաները.

Աղիւս, կղմինտր, պտուկ, փարչ, բղուկ=ջուռնող:

Ո՞վ կը շինէ կղմինտր, աղիւս: — Բրուտը ի՞նչ առարկաներ կը շինէ:

## ԲԱՐԻՔՈՎ ԶՈՒԱՐՃԱՆԱԼ

Զարեհ հարուստ ընտանիքի մը զաւակն էր: Ամառ օր մը իր դաստիարակին հետ դաշտերը պտտած միջոցին մացառի մը տակ զոյգ մը կօշիկ տեսաւ, զոր հոն մօտերը աշխատող աղքատ մշակ մը ձգեր էր: Տղան ուզեց այդ կօշիկները առնել պահել գործաւորին խաղ մը ընելու և անոր յուզ-



մունքը դիտելով զուարճանալու համար: Բայց դաստիարակը ըսաւ իրեն. «Աւելի ազնիւ միջոց մը ընտրէ՛ զուարճանալու»: Եւ խրատեց որ փոխանակ այդ կօշիկները վերցնելու՝ քանի մը դրուշ դնէ անոնց մէջ: Տղան հնազանդեցաւ: Քիչ մը ետքը գործաւորը եկաւ կօշիկները հագնելու, և մէջի դրամը տեսնելով՝ ուրախութենէն յուզուեցաւ, ծունկի վրայ եկաւ ու շնորհակալ եղաւ Աստուծոյ այս անակնկալ օգնութեան համար: Զարեհ հեռուէն զայն դիտելով՝ անկէ շատ աւելի երջանիկ եղաւ, որովհետեւ ինք եղեր էր այդ երջանկութեան պատճառը:

Թելադրութիւններ. — Բացատրել անջատեալ բառերը: — Զրուցագրել հատուածը: — Որոշել Բայերը:

## ԿՄԱԽՔ

Ոսկորները. — Երբ մատերով սեղմենք մեր գլուխը, ծունկը, դաստակը, մատերու տակ կարծր բան մը կ՚զգանք, որովհետեւ մեր մարմինին մէջ կը գտնուին կարծր մասեր որ ոսկոր կը կոչուին։ Ոսկորէն զատ ինչ որ կը մնայ մեր մէջ, միս, մորթ, ջիղ, ամէնքն ալ կակուղ են։



Գլուխ եւ ողնայար

Կմախք. — Մարդուն մարմինին մէջի բոլոր ոսկորները կմախք կը կոչուին. կմախքը երեք մաս է, գլուխ, իրան ու անդամներ։

Գլխու ոսկորները. — Գլուխին երկու մաս է, գանկ ու դէմք։



Կմախքին վրայ դիւրաւ կը ճանչցուին գլխու ոսկորները. մէկ մասը առջեւի կողմէն կ՚երեւայ, դէմքի ոսկորներն են ատոնք. միւս մասը ետեւի կողմը, գանկի ոսկորներն են անոնք։

Դէմքի վրայ են աչքերը, քիթը, բերանն ու ականջները։ Գանկը կը նմանի կլոր տուփի մը, անոր մէջ է ուղեղը։

Ողնայար. — Գլուխը կեցած է իրարու ետեւէ շարուած քսանըչորս ոսկորներու սիւնի մը վրայ. ատոր կ՚ըսուի ողնայար։ Մէն մի ոսկոր կը կոչուի ող. ասիկա մէջտեղէն ծակ է, առջեւը լեցուն ու հաստ մաս մը կայ։ Ետեւը և երկու կողմերը մէյմէկ դուրս ցցուած բարակ մասեր կան։

Թելադրութիւններ. — 1. Որո՞ւն կ՚ըսուի ոսկոր. — Ի՞նչ տեսակ մարմին է։ — Որո՞նք կակուղ են։ — Ոսկորները ի՞նչ կը կոչուին։ — Կմախքը քանի՞ մաս է։ —

Գլուխը քանի՞ մաս ունի։ — Որո՞նք են գանկի ոսկորները։ — Դէմքի վրայ ինչե՞ր կան։ — Գանկը ինչի՞ կը նմանի։ — Ո՞ւր է ուղեղը։ Ո՞րն է ողնայարը։ — Որո՞ւ կ՚ըսուի ողն։ — Մէջը ի՞նչ կայ։

2. Բացատրել անջատեալ բառերը։ — Ուղղագրել հատուածը։

3. Անունը քանի՞ թիւ ունի։ — Որո՞ւն կ՚ըսուի եզակի։ — Յոգնակի՞։

Որոշել այդ հատուածին մէջ եզակիներն ու յոգնակիները։

## ԳՈՒԹ

Ոտքը բոպիկ, գլուխը բաց,
Փորն անօթի, դէմքը դեղնած,
Չունէր հայր, մայր, և ոչ ալ տէր,
Դունէ ի դուռ կը պտըտէր.
Աչքերը միշտ լալէն ուռած՝
Ան կը խնդրէր հագուստ ու հաց։

Իր վիշտերն ամէն մէկուն
Ան կը պատմէր առտու, իրիկուն.
Փուշ փուշ եղաւ մարդոց մարմին՝
Ականջ դնելով անոր ձայնին,
Եւ բարեսիրտ տղայք անոր
Տուին բաներ հինցած կամ նոր։



Աս որ տեսաւ բարի Զաւէն,
Ցօղն արցունքի որբեց աչքէն,
Վազեց գնաց և իր մօրկան
Ըսաւ. «Մայրի՛կ, ա՜խ, այս ո՜րքան
Որբ տղայք կան, կը տառապին...
Ունեցածներս տո՛ւր սա որբին»։

«Ապրի՜ս, որդեա՛կ», ըսաւ հայրը,
Եւ համբուրեց զայն իր մայրը։
Քիչ վերջ Զաւէն մէկ մեծ ծրար
Յանձնեց որբին որ կը դողար։
Ուրախ եղաւ որբը յուզուած,
«Ապրի՜ս» ըսաւ վերէն Աստուած։

Թելադրութիւններ. — Շեղագիր բառերը բացատրել։ — Զրուցագրել։

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Իրազննական = Դէմ յանդիմանական



Թելադրութիւններ. — 4. Տնակը. — Ո՞ւրկէ կուգայ տնակ բառը. — Տուներէն ինչ տարբեր բաներով ծածկուած է. — Ի՞նչ է պատուհան մը. — Ի՞նչ է դուռը։

## ԻՐԱՆ

Իրանը երկու մաս է, կուրծք կամ լանջք ու որովայն։ Կուրծքի ոսկորները, այսինքն կողերը կը գտնուին գլխուն վարի կողմն ու ողնայարին առջեւի կողմը։

Կողերը երկար ու կոր ոսկորներ են որ ետեւի կողմէն միացած են ողնայարին, իսկ առջեւէն կուզան իբարու կը միանան։ Իւրաքանչիւր կողմ 12 կող կը գտնուին։ Կողերը կը շրջապատեն ու կը պաշտպանեն սիրտն ու թոքերը։ Շունչ առած ատեննիս կը զգանք որ մեր կողերն իրենց տեղէն կը շարժին, և խոսու ալ կուրծքին բոլոր ոսկորները փքոցի պէս կը բարձրանան ու կ'իջնեն, մինչ օդ ներս առնելու և դուրս հանելու համար։ Լանջքին մէջ են որովայնի ոսկորները, սիրտը, երկու թոքերն ու ստուգը։ Որովայնը որ փորն ալ կը կոչուի, այսպէս կազմուած է. ետեւէն ողնայարը, առջեւէն ու քովերէն մաշկ մը, վարէն կոնքը, վերէն ստոծանին։ Կոնքը որովայնի յատակի մասն է, և քանի մը ոսկորներէ ձեւացած է, իսկ ստոծանին կը գոյէ լանջքին յատակը։ Փորին մէջ կը գտնուին ստամոքսը, աղիքը, լեարդը, փայծաղը, երկու երիկամները։



---

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Իրաշնական = Դէմ յանդիմանական



Թելադրութիւններ. — 5. Տունը. — Որո՞նք են տան մը մասերը. — Գիւղացիին տունը կը նմանի՞ ձերինին. — Որո՞ւն կ'ըսեն գիւղացի. — Ի՞նչ կ'ընէ։

## ԱՆԴԱՄՆԵՐ


Իրան ու անդամներ

Չորս անդամ ունինք, երկուքը լանջքին կցուած և կ'ըսուին վերի անդամներ — ինչպէս ուս, բազուկ, ծղի, ձեռք։ Ասոնք զատ զատ ոսկորներէ կազմուած են։

Ձեռքը երեք մաս է — դաստակ, ափ, մատներ։ Հինգ մատները սա՛պէս կը կոչուին. բթամատ, ցուցամատ, միջնամատ, մատնեմատ, ճկոյթ։ Մատներուն ծայրը կայ եղունգ։



Միւս երկու անդամներն որովայնին կցուած են և կը կոչուին ստորին անդամ, ինչպէս զիստ, ազդր, սրունք, ոտք։ Ասոնք ալ զատ զատ ոսկորներով ձեւացած են։

Ոտքը երեք մաս է — դարշապար, ներբան ու հինգ մատներ։

Թելադրութիւններ. — Իրանը քանի՞ մաս ունի։ — Ո՞րոնք են կուրծքի ոսկորները։ — Ո՞րոնք են կողերը։ — Քանի՞ կող կայ։ — Շունչ առած առեննիս, ի՞նչ կ'ըլլան կողերը։ — Ո՞րոնք են որովայնի ոսկորները։ — Փորին մէջ ինչե՞ր կան։ Քանի՞ անդամ ունինք։ — Ո՞րոնք են վերի անդամները։ — Վարի՞նները։ Քանի՞ մաս ունի ձեռքը։— Քանի՞ մատ ունինք։ ..... Ծայրերը ի՞նչ կան։— Ոտքը քանի՞ մաս է։

Տեղագիր բառերը բացատրել։ Ուղղագրել հատուածը։ Որոշել եզակիններն ու յոգնակինները։

## ՎԱՐԴԱՎԱՌ

Յիսուս իր աշակերտներէն Պետրոսը, Յակոբոսը ու Յովհաննէսը հետը առնելով՝ բարձր լեռ մը ելաւ։

Ասոնց առջեւ այլակերպեցաւ. անոր երեսը արեգակի պէս փայլեցաւ ու հանդերձներն ձիւնի պէս ճերմկեցան։ Մովսէս ու Եղիա փառքով երեւցան անոնց և Յիսուսի հետ կը խօսէին։ — Պետրոս ըսաւ Յիսուսին. «Վարդապե՛տ, հոս կենանք և երեք խրճիթ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսին ու մէկն ալ Եղիային»։ Եւ ահա լուսաւոր ամպ մը եկաւ ու զանոնք ծածկեց։ Ամպին մէջէն ձայն մը կ'ըսէր. «Ասիկա իմ սիրելի Որդիս է, ատոր մտիկ ըրէք»։ Աչքերնին երբ վեր բարձրացուցին, Յիսուսէն զատ մէկը չտեսան։

Հին Հայոց Վարդավառը նոյնացուցին Այլակերպութեան հետ։ Այդ տօնին շատ ջուր կը սրսկեն իրարու վրայ, երբեմն վարդեջուր կը սրսկէին և աղաւնի կը թռցնէին։



Թելադրութիւններ. — 1. Յիսուս ո՞ւր այլակերպեցաւ. ի՞նչ եղան հանդերձները։ — Որո՞նք երեւցան։ — Պետրոս ի՞նչ ըսաւ։ — Ամպին մէջէն ի՞նչ լսուեցաւ։ — Հին Հայոց Վարդավառն ի՞նչ եղած է։ — Այդ տօնին ի՞նչ սովորութիւն կայ։

2. Բացատրել շեղագիրները։ — Հատուածն ուղղագրել։

3. Որոշել Ենթականներն ու Բայերը։

---

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Ոտնամաններ. — Կօշիկ, մուճակ, հողաթափ=բաբուճ, կրկնակօշիկ, տրեխ, մոյկ=չիզմէ։

2. Երիկմարդու հագնելիք. — Կօշիկ, տաբատ, բաճկոն=ելէկ, բաճկոնակ=ըլըգ, թիկնոց=Սեթրէ, վերարկու, վարապանակ=մինթան, պարեգօտ=էնթարի, փողկապ։

3. Ճերմակեղէն. — Գուլպայ, վարտիք, շապիկ, թաշկինակ։

4. Գլխանոց. — Գլխարկ, ֆէս, փակեղ, գտակ, խոյր։



Մանող



Դերձակուհի



Բոկոտն աղջիկ

## ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Հարուստ իշխան մը որսի ելած ըլլալով՝ հանդիպեցաւ ծեր մարդու մը որ ընկուզենի մը կը տնկէր։ — «Զարմա՛նք, ըսաւ իշխանը, այդ ծերուկը կը կարծէ թէ պիտի վայելէ նորատունկ ծառին պտուղները»։ Ծեր մարդուն մօտեցաւ և հարցուց թէ քանի՞ տարեկան է։ Ծերունին պատասխանեց. «Ութսուն տարեկան եմ. փա՛ռք Աստուծոյ։ — Իշխանը յարեց. — Դեռ քանի՞ տարի կ'ուզես ապրիլ որ



մատաղ ծառեր կը տնկես։ — Ծերունին պատասխանեց. — Քանի որ մենք մեր հօրը աշխատանքը կը վայելենք, պէտք չէ՞ որ մեր ապագայ սերունդն ալ վայելէ մերինը»։

«Հայրը կը ցանէ, որդին կը հնձէ»։

Իշխանը այդ պատասխանին հաւնելով՝ բուռ մը ոսկի պարգեւեց ծերուկին։ — «Ո՞վ կրնայ ըսել, աւելցուց ծերուկը, թէ մատաղ տունկին արդիւնքը չվայելեցի»։

## ԱՌԱԾ

Ինչ որ սորվի մարդս օրօրոցին մէջ, մինչեւ գերեզման կը տեւէ։

Թելադրութիւններ. — 1. Իշխան մը որսի ատեն ի՞նչ տեսաւ։ — Ի՞նչ հարցուց ծերուկին։ — Անիկա ի՞նչ պատասխանեց։ — Իշխանն ի՞նչ տուաւ։ — Ասկէ ի՞նչ կրնաք սորվիլ։

2. Բացատրել շեղագիրները։ Հատուածն ուղղագրել։

3. Որո՞ւ կ'ըսուի Ածական։ — Ածականն որո՞ւ քով կը դրուի։ — Որոշել այդ հատուածին մէջ Ածականները։

## ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Տիրամայր Ս. Աստուածածնի նուիրուած ամենէն մեծ ու ամենէն հանդիսաւոր տօնն է Տիրամօր ննջելուն և Երկինք փոխուելուն օրը, որ Վերափոխումն Աստուածածնի կը կոչուի։ Այդ տօնին մեծ ուրախութեամբ եկեղեցի կը տանին այգիներու և արտերու պտուղներն, և պատարագէն վերջը կ'օրհնեն զանոնք։ Բարի գիւղացին ջերմեռանդութեամբ վեր կը բարձրացնէ խաղողի փոքրիկ ողկոյզն և ափ մը ցորեն, և օրհնել կու տայ։ Խաղողը կ'ուտէ և պահքը կը լուծէ։ Ցորենը կը տանի սերմերուն հետ կը խառնէ։ Այն օրուընէ սկսեալ խաղող կուտենք։

Յիսուս խաչին վրայէն պատուիրեց Յովհաննէս առաքեալին որ իր



մօրը խնամք տանի։ Այն օրէն ետք, մինչեւ 16 տարի շարունակ, Մարիամ Աստուածամայրը Յովհաննէսին քով կեցաւ։ Երբ Ս. Կոյսը մեռաւ, Առաքեալները թաղեցին Գեթսեմանի ձորն, ուր Յուդա գինուորներուն ձեռքը մատնած էր Յիսուսը։

Թելադրութիւններ. — 1. Տիրամօր նուիրուած ամէնէն մեծ տօնն ո՞րն է։ — Ո՞րն է Վերափոխումը։ — Յիսուս խաչին վրայէն ի՞նչ պատուիրած էր։ — Ո՞ւր թաղուեցաւ Ս. Կոյսը։ — Այդ տօնին ինչե՞ր կ'ընեն։

2. Բացատրել անջատեալ բառերը։ — Ուղղագրել հատուածը։

3. Որոշել նախադասութիւնները։

---

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Իրազննական — Դէմ յանդիմանական




Թելադրութիւններ. — 6. Պանդոկը. — Ձեր բնակած տեղը պանդոկ կա՞յ. — Ինչպէս կը կոչուի պանդոկ վարողը. — Ինչո՞ւ համար եղած են պանդոկները։

## ԱՌՏՈՒԽԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Կարմիր արեւը բարձրացաւ երկինքի վրայ եւ սկսաւ ամէն կողմ տարածել իր ոսկեփայլ ճառագայթները որ երկիրս օրհնեն։

Առաջին ճառագայթը թռաւ ինկաւ արտոյտին վրայ։

Արտոյտը թփթփաց, թեւերը շարժեց, դուրս թռաւ բոյնէն, արագ արագ բարձրացաւ եւ երգեց իր գեղեցիկ երգը։— «Ա՛հ ինչ քաղցր է առաւօտեան պարզ ու զով օդին մէջ թռչիլ, ի՛նչպէս լաւ է, ի՛նչ ուրախութիւն»։

Երկրորդ ճառագայթն ինկաւ նապաստակին վրայ։ Նապաստակին ականջները շարժեց եւ ուրախ դէմքով սկսաւ ցատկոտել ցօղապատ մարգագետիններու վրայ։ Ետքը վազեց գնաց նախաճաշ ընել հիւթալի խոտերով։



Երրորդ ճառագայթը հաւնոցը մըտաւ։ Աքաղաղը թափահարեց իր թեւերը եւ երգեց. «Կո՛ւ-կու-լիկ-կո՛ւ»։ Հաւերը թառերուն մէջ հաւաքուեցան, կրկռացին, սկսան աղբը յուզել եւ ճճի փնտռել։

Չորրորդ ճառագայթն ինկաւ փեթակին վրայ։ Մեղուն դուրս սողաց իր մոմեղէն խցիկէն, կեցաւ փեթակին դրան առջեւ, թեւերը բացաւ եւ բզզալով թռաւ գնաց մեղր հաւաքել հոտաւէտ ծաղիկներէն։

Հինգերորդ ճառագայթն ինկաւ մանկանոցը, փոքրիկ ծոյլ մանուկին անկողնին վրայ եւ սկսաւ ուղղակի անոր աչքերը ծակել, բայց ան միւս կողմը դարձաւ եւ նորէն քնացաւ։

Թելադրութիւններ. — 1. Առաջին ճառագայթն ո՞ւր ինկաւ։ — Բ. ը՞, Գ. ը՞, Դ. ը՞, Ե. ը՞։ — Իւրաքանչիւրն ի՞նչ ըրին։

2. Անջատել բառերը բացատրել։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել անցեալ կատարեալները։— Բայը քանի՞ ժամանակ ունի։—Ո՞րն է ներկան, անցեա՞լը, ապառնի՞ն։

## ՀԱՆԵԼՈՒԿ

Տախտակ մը ունիմ,
Տարին տասներկու ամիս
Մէջը ջուր է.
Թէ՛ կը թրջի
Եւ թէ չի թրջեր։
(Լեզու)

## ԸՆՏԱՆԻ ՄՍԱԿԵՐՆԵՐ

1. Շունը մարդոց ընտանեցած է և շատ հաւատարիմ է. հլութեամբ կը հնազանդի իր տիրոջ։ Շունը հովուին հօտը կը պաշտպանէ գայլերուն դէմ, կոյր մուրացիկին կ'առաջնորդէ, որսոր-



Շուն



դին կ'ընկերանայ, անոր գործերուն կ'օգնէ, տան պահապանը կ'ըլլայ և կը հսկէ։

Շան ձագը կը կոչուի լակոտ, որսի շունը՝ բարակ, պահապան շունը՝ գամփռ, էգը՝ քած։



Կատու

2. Կատուն սիրուն կենդանի մըն է, փափուկ մուշտակ ունի, տան մէջ մուկերը կը ջնջէ։

Թելադրութիւններ. — Շունն ի՞նչ եղած է։ — Ինչե՞ր կ'ընէ։ — Ձագը ի՞նչ կը կոչուի։ — Ո՞րն է բարակը։— Գամփռը՞։

Ի՞նչ տեսակ կենդանի է կատուն։ — Ի՞նչ ունի։

## ԿՐԾՈՂՆԵՐ

Կրծող անասունները անոնք են որ բոյսերու արմատներ ու պտուղներ կրծելով կ'ուտեն։ Ասոնց առջեւի ակ-

ատամները շատ ուժով են և կը դիմանան շարունակ կրծելու։ Կրծող անասուններն են Նապաստակը, Ճագարը, Մուկը։



Նապաստակ



Ճագար



Մուկ

Մուկն ու մանրամուկը տունը կը բնակին, մեր ուտելիքները, զգեստները, գիրքերը, կարասիները կրծելով մեծ վնասներ կուտան մեզի։ Կատուն է որ անոնց կրնայ ջարդ տալ։

Թելադրութիւններ. — 1. Որո՞նք են կրծող անասունները։ — Ի՞նչ կ'ընէ մուկը։ — Ո՞րն է ամենէն վախկոտը։ — Նապաստակն ո՞ր անասունին կը նմանի։ — Ո՞ւր կը գտնուի։ — Ճագա՞րը։

2. Անջատեալ բառերը բացատրել։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել Բայերուն ներկայ ժամանակը։



## ՇՈՒՆ

Ի՛մ աղուոր շնիկ, ի՛մ շնիկ սիրուն,
Կայտառ ու աշխոյժ կենդանի մ'ես դուն,
Գիշեր թէ՛ ցորեկ, առտու թէ՛ իրիկուն
Կը հսկես հօտին, կը պահես մեր տուն։
Վա՜յ, եթէ օտար կենդանի կամ մարդ-
Մօտենայ մեզի չար նպատակով,
Իսկոյն կը վազես ի մի ակնթարթ
«Հասէ՛ք» կը գոչես, հավ հավ հաչելով։
Կամ թէ աղուէսն ուզէ խորամանկ
Գողնալու համար հաւ, բադ կամ վառեակ
Անցնիլ գիշերանց մեր պարտէզին տակ,
Կը հասնիս ու զայն կ'ընես ահաբեկ։
Ի՛մ աղուորիկ շուն, ի՛մ գեղեցիկ շուն,
Ունիս թաւ մազեր, աչքեր վառվռուն,
Վնաս չես տար քեզ սիրողներուն,
Մեր հաւատարիմ պահապանն ես դուն։
Փոքրիկ մանուկներ քեզ շատ կը սիրեն,
Իրենց ձեռքովը քեզի կուտան կեր,
Կը շոյեն ոտներդ ու կը փայփայեն,
Արթո՛ւն պահապան, խորոտի՛կ ընկեր։

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիր բառերը։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

## ՆԱՊԱՍՏԱԿԸ

Նապաստակը թուփերու տակ ցատկելով
Եւ թաթերը իրարու հետ զարնելով՝
Կ'ըսէր, Աստուա՜ծ, այս ինչ տեսակ ցրտեր է,
Բոլոր բնութիւն կարծես սառեր պաղեր է.
Բայց միմիայն ծառերը հոգ չեմ ըներ,
Թաթիկներս ցրտէն սառեր են, թմրեր։
Ա՜խ, ի՞նչ կ'ըլլար որ ես ալ մարդ ըլլայի,
Անոր նման տաքս տունս հասնէի,
Տաք խրճիթին մէջը նստած այլոց հետ՝
Միշտ տաքնայինք ցատկռտելով մենք յաւէտ։
Տանս հացը ես ուտէի կաղամբով,
Եւ քաղցրահամ ստեպղինը կրծելով։
Լաւ ալ կ'ըլլար ձմեռ խուցին մէջ անցնել,
Փոքրիկ թաթերս թոնիրին մէջ տաքցնել։

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիրները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

## ՀԱՆԵԼՈՒԿ

Հարս մը ունիմ որ եկող գացողին ձեռքը կը պագնէ։ (Դրան զանգակ)



## ՈՐՈՃԱՑՈՂՆԵՐ

Որոճացող կենդանիներն անոնք են որ բոյսերը կ'ուտեն, ու կլլելէն ետքը, երբ որ ուզեն, իրենց բերնին մէջ կը բերեն ու վերստին կը ծամեն։ Տեսած չէ՞ք ոչխարին, այծին, կովուն, եզին որոճալը։

Որոճացող կենդանիներն են ոչխարը, այծը, կովը, եզը, գոմէշը, ուղտը, եղջերուն։


Այծ


Կով


Ուղտ


Եղջերու



Ոչխար

Ոչխարը շատ օգտակար կենդանի մըն է. կաթն ու միսը սնունդ կ'ըլլան, բուրդը հիւսելի նիւթ մըն է. անով կը շինեն բուրդէ կերպասներ։ Մորթը կաշի կ'ըլլայ, ոսկորն ու եղջիւրը կը գործածեն զմելիի կոթ ու կոճակ շինելու։

Ձագը կը կոչուի բուծ, գառնուկ, էգը՝ մաքի, արուն՝ խոյ։

Այծն ոչխարին չափ կենդանի մըն է, անոր չափ օգտակար, կաթն ու միսը սնունդ կ'ըլլան։ Մազը, մորթը, եղջիւրն ու ոսկորը կը գործածեն։

Ձագն՝ ուլ, արու ձագը՝ ամիկ, էգ ձագը՝ քած, արուն՝ նոխազ։

Թելադրութիւններ. — 1. Որո՞նք են որոճացող կենդանիները։ — Ինչ կ'ընեն։

Ոչխարն ինչ օգտակարութիւն ունի։ — Ինչ կը կոչուի ձագը։ — Արո՞ւն։ — Էգը՞։



2. Այծն ինչ օգտակարութիւն ունի։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել Բայերուն ներկայ ժամանակը։

4. Քանի հոլով կայ։ — Որո՞նք են։ — Հոլովել բուրդ, այծ, ոչխար, բոլոր բառերը։

## ԱՅԾԸ

Մայիս, երկարամօրուս այծը կայտառ կայտառ կը շրջագայէր, կոտոշներն ու մօրուքը կը շարժէր, տոտիկներով գետինը կը զարնէր, մկկալով կը պտտէր և ուլիկները քով կը կանչէր։ Իսկ ուլիկները անոր ձայնին մտիկ չէին ըներ, պարտէզը մտած՝ կանաչ խոտ կ'ուտէին, արմատներ կը կըրծէին, մատղաշ ոստերը կը խլէին, յետոյ ետ կը դառնային՝ կոտոշ կոտոշի զարնելով և իրարու հետ կռուելով։ Վերջապէս պարտէզին տէրն եկաւ ու պատժեց զանոնք։

Թելադրութիւններ. — 1. Այծը ինչե՞ր ունի։ — Ինչպէս կը պտտէր։ — Ուլիկներն ինչ ըրին։ — Պարտէզին տէրն ինչ ըրաւ։

2. Բացատրել շեղագիրներն ու թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել Անունները։ — Բայերը։ — Որոշել անցեալ անկատարները, անցեալ կատարեալները։

4. Հոլովել անունները։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Հետեւեալ արհեստաւորները ինչե՞ր կը շինեն.

Տակառագործ. — Ատաղձագործ. — Որմնադիր. — Դերձակ. — Թիթեղագործ. -- Բրուտ. — Կօշկակար. — Հնակարկատ. — Թամբագործ. — Ժամագործ. — Ոստայնանկ. — Խաղախորդ:

## ՊԱՅՏ

Հարուստ գեղացի մը տղուն հետ քաղաք կ'երթար: «Աչքդ բա՛ց, Կարապե՛տ, ըսաւ հայրը, ճամբուն վրայ պայտ մը ինկած է, վեր ա՛ռ: — Է՜հ, հայրի՛կ, այս չնչին բանին համար ծռիլ կ'արժէ՞», պատասխանեց Կարապետ: Հայրը ձայն չհանեց, ինքը պայտը վերցուց ու պարկին մէջ դրաւ: Ճամբան պայտը մէկ դահեկանի ծախեց դարբինի մը և այդ ստակով բալ գնեց: Օդը տաք էր, Կարապետ ծարաւէն կը տանջուէր և հազիւ հօրն ետեւէն կրնար երթալ: Յանկարծ հայրը իբրեւ թէ անզգուշաբար բալ մը ձգեց: Կարապետ իսկոյն վերցուց զայն, կերաւ և քիչ մը զովացաւ: Հետզհետէ հայրը բալերը վար ձգեց և Կարապետ ծռելով՝ շարունակ զանոնք կը հաւաքէր կ'ուտէր: Հայրն ըսաւ. «Կը տեսնե՞ս, զաւա՛կս, եթէ մէկ անգամ պայտին համար ծռէիր, այսքան անգամ չպիտի ծռէիր բալերուն համար: Ա՛ս քեզի խրատ ըլլայ որ ուրիշ անգամ ծուլութիւն չընես»:



Թելադրութիւններ. — Հարցումներ. — Բացատրել շեղագիրները: Թելադրութեամբ գրել հատուածը: Որո՞ւ կ'ըսուի Նախադրութիւն, որոշել:

## ՀԱՆԵԼՈՒԿ

Մայրն աշխարհ չեկած՝
Որդին երդիքն է ելած
(Մուխ)

Քար քարի վրայ քար չէ,
Հաւկիթ կ'ածէ՝
Հաւ ալ չէ.
Լեռ ու սար կ'արածի,
Տաւար չէ: (Կրեայ)

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ՎԷՃԸ

### ԱՄԷՆ ԻՆՉ ՕԳՏԱԿԱՐ Է

Կովը, Ձին ու Շունը կը վիճաբանէին իրարու հետ թէ Տանտէրը իրենցմէ ո՞րն աւելի կը սիրէր:
— «Հարկաւ զիս ամէնէդ աւելի կը սիրէ,

ըսաւ Ձին. ես անոր արօրն ու ցաքանը կը քաշեմ, անտառներէն անոր փայտ կը բերեմ, շատ անգամ վրաս կը հեծնայ և խաղալ կ'երթայ։ Առանց ինծի բոլորովին կորսուած է անիկա։

— Ոչ, մեր տէրը զիս աւելի կը սիրէ, ըսաւ Կովը. քու ըրածդ ի՞նչ է որ մեծ մեծ կը ջարդես, տանը մեծ մասն իմ եղբայրս եզն ալ կրնայ ընել, իսկ ես անոր բոլոր ընտանիքը կաթով կը կերակրեմ։

— Դուք երկուքդ ալ կը սխալիք, ոռնաց Շունը, մեր տէրը զիս ամենէդ աւելի կը սիրէ, որովհետեւ անոր բոլոր հարստութիւնը կը պահպանեմ»։

Կենդանիներուն Տէրն այս վէճը լսեց ու ըսաւ անոնց. «Ի զուր մի՛ վիճիք իրարու հետ։ Դուք ամենքդ ալ ինծի պիտանի էք և ձեզմէ իւրաքանչիւրը լաւ է իր տեղը»։

Թելադրութիւններ. — 1. Որո՞նք կը վիճաբանէին իրարու հետ։ — Ձին ի՞նչ կ'ըսէր։ — Կո՞վը։ — Շո՞ւնը։ —Կենդանիներուն տէրը ի՞նչ վճռեց։

2. Բացատրել շեղագիր բառերը։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Բայերը քանի՞ եղանակ ունին։ — Որո՞ւ կ'ըսուի եղանակ։ — Որոշել եղանակները։



Ամբողջ հատուածին մէջ անկատար անցեալներն ապառնի ժամանակի վերածել։

## ԿՈՐՍՈՒԱԾ ՀՈՐԹ

Ձիւնը կուգար փաթիլ-փաթիլ,
Հետն ալ անձրեւ կաթիլ-կաթիլ,
Այդ միջոցին մէկ պառաւ կին
Հորթ մը փնտռէր ի մէջ դաշտին։

Կովը եկաւ երբ արօտէն՝
Կուրծքն ու ծիծեր լեցուն կաթէն,
«Հորթուկս ո՞ւր է» ան բառաչեց,
Խեղճ պառաւին ցաւ պատճառեց։

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Կ'արտասուէին լաց ու կոծով,
Յանկարծ լսուեց բարակ մի ձայն,
Կովն իմացաւ որ հորթն է այն։

Կովը վազեց բառաչելով,
Պառաւն ետեւէն ճռճռալով.
Կորսուած հորթը մայրը գտաւ,
Լեցուն ծիծը բերանն առաւ։

Ծծեց բոլոր կաթն ու հասցուց,
Մեր պառաւին բան չթողուց.
Բայց պառաւն այս անգամին,
Սիրով ներեց չար հորթուկին։

## ԱՌԱԾ

Փոքրիկ տղայք կարօտ են իրենց ծնողքին պաշտպանութեան ։

Կով մը ունիմ
Կաթ կուտայ ,
Ինք տուն չիգար ։
(Արտ)



Ձի



Էշ

Իրագիտութիւն . — Կենդանական ընտանիքներ . — 1 . Արջառ . արուն՝ ցուլ , եզն . էգը՝ կով . ձագը՝ հորթ , մոզի , ընչուղ . չափահաս արուն՝ չուարակ . էգը՝ երինջ ։ 2 . Ձի . արուն՝ երիվար , ասպ , նժոյգ , մատակախաղ . էգը՝ մատակ , զամբիկ , ծփիկ , ճակ . ձագը՝ մտրուկ ։ 3 . Էշ . էգը՝ մատակ . ձագը՝ քուռակ , աւանակ , վայրենին՝ ցիռ ։



## ԱՐՋՆ ՈՒ ԹՌՉՈՒՆԸ

Արջ մը փոքրիկ թռչիւն մը ծնաւ , ա՛յնքան տգեղ որ անասունի կերպարանք չունէր , այլանդակ ու սոսկալի զանգուած մըն էր ։ Արջն այսպիսի ձագ մը ունենալուն վրայ ամօթահար՝ կ'երթայ իր դրացի Որին կը գտնէ . «Ի՞նչ պիտի ընեմ , սանամա՛յր , կ'ըսէ անոր , ի՞նչ պիտի ընեմ այս հրէշը, խեղդելս կուգայ» ։

— Չըլլայ որ սատանի բան ընես , ըսաւ անոր շաղակրատ Թռչունը . ուրիշ արջեր ալ տեսած եմ միեւնոյն մտահոգութեան մէջ. գնա՛, կամաց կամաց լզէ՛ ձագուկդ , քիչ օրէն սիրուն ու աղուոր պիտի երեւայ աչքիդ , և անով երջանիկ պիտի ըլլաս» ։ Մայրը դիւրաւ հաւատաց , ընդ երկար լզեց ձագը որ վերջ ի վերջոյ աղուորնալ սկսաւ ։ Արջը գնաց շնորհակալութիւն յայտնել Որիին . — «Ինծի համբերելու խորհուրդ չտայիք, ըսաւ, անգթօրէն յօշոտած պիտի ըլլայի ձագուկս որ այժմ կեանքիս բոլոր հաճոյքն է» ։

## ԱՌԱԾ

Համբերութիւնը որքա՜ն չարիքներու առաջքը կ'առնէ ու բարիք կը ծնի ։

Թելադրութիւններ. — 1. Նկարագրել Արջն ու Թոժինը։

2. Չեղագիր բառերը բացատրել. — Թելադրութեամբ գրել հատուածը։

2. Գտնել բայերուն ժամանակը։ — Ներկայ ժամանակը ապառնի անկատարի վերածել։

## ՔԱՂՑՐ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Աշխատեցէ՛ք, տղա՛ք, որ անոյշ բնաւորութիւն մը ունենաք։ Երբեք մէկուն վրայ գէշ խօսքեր մի՛ զրուցէք, բարկացոտ, ծաղրող, եսասէր մի՛ ըլլաք, խաղցրաբարոյ եղէք միշտ, այսինքն ամէնուն հետ անուշութեամբ վարուեցէք, դիտեցէք թէ ձեր ընկերներուն մէջ որո՞նք ամէնէն աւելի կը գովուին, կը սիրուին. պիտի տեսնէք որ այն տղաք որոնք ազնիւ են և ընկերներնուն վրայ աղէկ կը խօսին, զուարթ և համարձակ են։

Միթէ դուք կ'ուզէ՞ք որ մէկը ձեզ չարչարէ, ձեզի հետ բարկութեամբ խօսի, գործի մը համար կուշտ կերպով ձեզ վռնտէ, ձեր երեսը չնայի, ձեզ արհամարհէ, ձեր ետեւէն ձեզի չար խօսքեր ըսէ։ Չէ՛, այս բաները չէք ուզեր։ Ուրեմն աշխատեցէ՛ք որ դուք ալ այս տեսակ բաներ չընէք ուրիշներուն, ահա այն ատեն քաղցրաբարոյ կ'ըլլաք։



## ԱՌԱԾ

Քաղցրաբարոյ մարդը արդէն ինքն իրեն բարիք մըն է ընկերութեան մէջ։

Եթէ դուք ձեր եղբայրներուն հետ քաղցրաբարոյ չէք, ինչպէ՞ս կրնաք պահանջել որ անոնք քաղցրաբարոյ ըլլան ձեզի հետ։

Թելադրութիւններ. — 1. Տղա՛ք, ինչ պարտքեր ունիք։ — Ինչերէ՞ չէքախորժիր։

2. Բացատրել չեղագիրները։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել բայերուն եղանակը։

4. Որո՞ւ կ'ըսուի կոչական։ Գտնել կոչականն այս հատուածին մէջ։ Կոչականին վրայ ինչ կը դրուի։

Իրագիտութիւն. — Թելադրութիւններ. — Ինչի՞ կը ծառայեն և ո՞վ կը գործածէ հետեւեալ գործիքները.



Մուրճ, սղոց, գայլիկոն, ուրագ, քերոց=ռէնտէ, կողպանք, աղցան, ասեղ, վրձին, խարտոց, գրոց, գուրգն=բուրղու անի, գութան, արօր, թի, բրիչ, երկժանի =չաթալ բալթա, փոցխ=թրմուխ, մուրճ։

## ԾԻԾԵՌՆԱԿ

Մարտն անցաւ, եկաւ Ապրիլ գեղեցիկ,
Հեռու տեղերէ դարձաւ ծիծեռնիկ,
Օ՜, բարի եկա՛ր, Գարնան կարապետ,
Բոյն շինողներուն ամէնէն վարպետ:
Փախաւ կռունկը, Թռաւ վերերէն,
Սոխակն հեռացաւ մեր պարտէզներէն.



Միայն դու մնացիր ճնճղուկներուն հետ,
Սիրո՛ւն Ծիծեռնակ, Գարնան կարապետ։
Պատուհանիս մէջ շինէ՛ քու բոյնը,
Անոյշ ձայնովդ երգէ գարունը.
Ձու ածէ, հանէ՛ գեղեցիկ ձագեր
Մեր քովը կեցիր մինչեւ սեպտեմբեր։

Թելադրութիւններ. — Շեղագիր բառերը բացատրել։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

## ԱՌԱԾ

Լայնին ճար կայ, նեղին ճար չկայ։
Խօսքը մեծին, ջուրը պզտիկին։



## ՍԱԳԵՐ

Սագերը դաշտին գետին ափունքը կերակուր գտնելու և ճճիներ որսալու: Իրիկունը պառաւն առաւ գաւազանը և գնաց որ տուն բերէ զանոնք։ Սագերը պառաւը տեսնելնուն պէս ջուրը նետուեցան և սկսան լողալ: Պառաւը կանչեց զանոնք.



«Ճո՜ւ, ճո՜ւ, ճո՜ւ, շատակեր
Սեւ ու սպիտակ իմ սագեր,
Հերի՛ք որչափ լողացիք,
Հերի՛ք որչափ գետին մօտ՝
Որդեր կերաք դուք տղմոտ,
Երթա՛նք, երթա՛նք դէպի տուն
Ձեզ կոչ կուտամ իրիկուն։»

Իսկ չար սագերը չուզեցին ականջ կախել, վիզերնին երկնցուցին, կարմիր ոտքերնին շարժեցին, լայն թեւերնին զարկին, կտուցնին բացին և գա՜, գա՜, գոռացին: Բայց պառաւը գաւազանով սագերը տուն դարձուց։

Թելադրութիւններ. — 1. Քանի՞ տեսակ թռչուն կայ. Ի՞նչ կ'ընեն. — Որո՞նք են գիշատիչները. — Որո՞նք են հաւազգիները։

2. Բացատրել շեղագիրներն ու թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել անուններն ու բայերը։ — Ո՞ր անունն իր, ո՞րը անասուն է։

Խրագիտութիւն. — Ցոյց տուէք թէ ո՞ւր կը գըտնուին մարդկային գլխու մասերը. գագաթ, ծոծրակ, ծնօտ, ճակատ, աչք, արտեւանունք, յօնք, բիբ, աչքի ծիածան, քիթ, ռունգեր, այտ, ականջ, բերան, շըրթունք, ակռայ, լնտերք, լեզու, լեզուակ, կզակ, մօրուք, ընչացք, մազ։

### ԱՌԱԾ

Երանութիւնը պարտաճանաչութեան մէջ է։

* *
*

Գիտցիր չգիտցիր ինչ որ ըսէ,
Դու քու պարտքդ լաւ կատարէ.
Թող պատահի ինչ որ կ'ուզէ,
Աստուած բարին թող կատարէ։



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՕՁ

### Ա.

Աղուէս և օձ իրար գտան,
Մտերմաբար դաշնակցեցան
Որ իրարմէ ամենեւին,
Ինչ որ ըլլայ, չբաժնուին։
Բայց ո՞վ չգիտէ,
Խիկար կը պնդէ




Թէ չարերուն ընկերութիւն
Կարելի չէ ըլլալ տեւուն։
Այս առածին՝ բախտն ալ կարծես
Ճշդութիւնը շատ հաստատեց։
Օր մը անոնք ձորի մը քով
Վազող ջուրին շեշտ նայելով՝
Ինչ սիրալիր խօսք իրարու
Տուին առին, ո՞վ պատմելու
Ունի լեզու։
Խորհուրդն անհաս, ի՞նչ էր արդեօք,
Որուն համար էին մտահոգ։

Ջուր կար շատկեկ, մէկը լող գիտէր,
Իսկ միւսը՝ կեղծէր թէ չէր գիտեր ։
Բայց վերջապէս գտան ճար,
Եւ արդարեւ գիւտ ճարտար ։
Թողուց Աղուէս, վա՜յ մեղքիս,
Որ օձ ոլրի իրեն վիզ.
Սակայն յետո՜յ, վա՜յ իմ մեղքիս,
Օձ կը խարճէր Աղուէսին վիզ
Պինդ սեղմել
Սատակել ։

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՕՁ

Բ.

Մազ մնաց որ Աղուէս խեղդուէր,
Եթէ ճարպիկ չգտնուէր
Ու չաղերսէր .
«Օձուկ եղբա՛յր, մնա՜ս բարեաւ,
Մահու, այժմ, կ'զգամ մէկ ցաւ,
Միակ հայցուած քեզի ունիմ, կը պաղատիմ
Որ կատարել սիրով հաճիս, սիրականդ իմ ։
— Ըսէ՛ :
— Ա՜խ մէկ անգամ քու գլխիկդ երկարէիր,
Վերջին անգամ ինծի պաչիկ ճակտէդ տայիր,
Գէթ աչքս բաց ես չմեռնէի ։»



Խորամանկին այս խօսքերէն
Համոզուեցաւ Օձն անօրէն,
Եւ գլխիկը երբ երկարեց,
Բոլոր ուժովն ակոյն Աղուէս
Ցնցեցաւ .
Յաջողեցաւ
Օձին գլուխը խածնել ճզմել,
Եւ օձ վրայէն մէկդի նետել ։
Յայտնի է երբ Օձ կը հոգեվարի
Շիփ շիտակուկ մը երկար կը փռուի :
Սոյն օրինակ հովուարին ակնէն ի վար
Մեր աղուեսուկ ծիծաղելով կը մռմռար :
«Այս աշխարհի մէջ ընկերաբար
Անկեղծ սիրով ապրելու համար,
Սրտով ալ ըլլալու է շիփ շիտակ,
Ոչ թէ ծուռ մուռ, կ'իմանա՞ս դու, ո՜վ Օձուկ ։»

Թելադրութիւններ . — 1 . Բացատրել շեղագիր բառերը ։ — Թելադրութեամբ գրել հատուածը ։
2 . Որոշել անուններն ու բայերը ։
3 . Որոշել նախադրութիւններն ու մակբայները ։

## ԱՌԱԾ

Խենդը քար մը նետեց հորը,
Հազար խելօք չկրցան հանել ։

**Իրագիտութիւն**. — Ցոյց տուէ՛ք թէ ո՞ւր կը գտնուին մարդկային իրանի=բունի հետեւեալ մասերը. — Վիզ, պարանոց, կռնակ, ողնայար, լանջ, կող, մէջք, փոր:

Անդամներու մասեր. — Թեւ, ուս, բազուկ, արմուկ, դաստակ, ձեռք, կռուփ, ափ, բթամատ, ցուցամատ, միջնամատ, մատնեմատ, ճկոյթ, եղունգներ: — Ոտք, սրունքներ, զիստ, ազդր, ծունկ, ոլոք, ներբան, ոտքի մատներ:

## ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ

Ութ տարեկան աղջիկ մը Մաքրինէ անունով ոտքերը քաշուած՝ *անդամալոյծ*, միշտ պատուհանին առջեւ կը նստէր ու բան մը չէր կրնար ընել: Եղաւ որ իր մայրը մեռաւ, հայրն ալ կուրցաւ: Ի՞նչ ընելու էր խեղճ աղջիկը: Մտածեց որ հիմա ինքը պէտք է օգնէ իր հօրը: Անմիջապէս կօշիկի մեծ գործատուն մը կ'երթայ ու կը խնդրէ որ իրեն գործ տան: Ամբողջ ցորեկն ու գիշերուան մէկ մասը կ'աշխատի՝ մուճակ կը կարէ, և օրական մը ձեռք բերելով՝ իր կոյր հայրը կ'ապրեցնէ:

Ուրիշ ժիր տղայ մը, Արէտ անունով, դեռ



տասնըվեց տարեկան, կը կորսնցնէ իր սիրելի հայրն ու *գորովագութ* մայրը: Տանը մէջ կը մնան իր երեք պզտիկ քոյրերը և մեծ հայրը որ հիւանդ էր, և տեղէն չէր կրնար շարժիլ: Ի՞նչ ընէր հիմա Արէտ, նա խելացի ու *ճարտար* տղայ էր, կ'երթայ գործարանատէրի մը քով ու կ'աղաչէ որ իրեն գործ տայ: Արէտ դպրոցէն ելած էր ու աղէկ բաներ սորված գիտութեան վրայ: Գործարանատէրը կը հաւնի անոր ու քովը կ'առնէ: Արէտ ցորեկը քանի մը ժամ կ'աշխատէր գործարանին մէջ, յետոյ հրաման կ'ուզէր գործարանապետէն որ տուն երթայ, հոն աշխատի ու իր քոյրերուն վրայ հսկէ: Այսպէսով Արէտ *հսկեց*, *խնամեց*, *մեծցուց* իր պզտիկ քոյրերը, ինչպէս հայր մը, մայր մը: Երբ մեծ հայրը մեռաւ, արդէն *շէնք շնորհք* տուն տեղ շինած էր Արէտ:

**Թելադրութիւններ**. — 1. Նկարագրել Մաքրինէն ու Արէտը:

2. Բացատրել շեղագիր բառերը: — Թելադրութեամբ գրել հատուածը:

3. Որոշել բային ժամանակները, գծել ածականները:

## ՔԱՋՈՒԹԻՒՆ

Անգամ մը լեռներուն մէջէն ուղտերու մեծ կարաւան մը կ՚անցնէր՝ ապրանք բեռցուած։ Հարուստ վաճառականներն իրենց ապրանքին հետ մէկտեղ կը ճամբորդէին։ Երբ մտան այնպիսի խորունկ ձորի մը մէջ ուր միայն երկինքի կապոյտը կ՚երեւէր, յանկարծ շատ մը ձիաւորներ ժայռերու ետեւէն դուրս թափեցան և կարաւանին առջեւը բռնեցին։ Անոնք աւազակներ էին և կ՚ուզէին կարաւանը կողոպտել։

Վաճառականներուն մէջ մէկը կար՝ քառասուն տարեկան միջահասակ քաջ մարդ մը՝ որ անմիջապէս բոլոր ջորեպաններուն ու վաճառականներուն գլուխն անցաւ և հրաման ըրաւ որ կարաւանը կեցնեն։ Յետոյ հաւաքեց իր բոլոր մարդիկը, ձիերուն ետեւ մնացուց զանոնք և հրացանները ուղղեց աւազակներուն, գոչելով. «Կա՛մ հեռացէք, կա՛մ կը զարնենք»։ Աւազակները տեսան որ իրենց գործը դէշ է, քաշուեցան և մտքերնին դրին երթալ ձորին միւս բերանն սպասել։ Քաջասիրտ վաճառականը որ շատ ճամբորդութիւններ ըրած էր և աւազակներու հնարքները գիտէր,



անմիջապէս կարաւանին գլուխը դարձուց և ճամբան փոխեց։ Կը տեսնէ՞ք հիմա։ Այս քաջ մարդը նախ չվախցաւ և քաջութեամբ աւազակները հեռացուց։ Բայց յետոյ խոհեմութիւն ըրաւ և ճամբան փոխեց։

Թելադրութիւններ. — 1. Աւազակներն ե՞րբ յանկարծ յարձակեցան վաճառականներուն վրայ։ — Ի՞նչ ըրին։ — Քաջասիրտ վաճառականն ի՞նչ ըրաւ։

2. Բացատրել չեղագիրները. — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել շաղկապներն ու մակբայները։




Իրագիտութիւն. — Ծառի մը մասերը. — Արմատ, բուն, ճիւղ, տերեւ, ծաղիկ, պտուղ։

Բունի մասեր. — Կեղեւ, փայտ, ծուծ։

Ճիւղի մասեր. — Կոկոն, ոստ, ոստիկ։

Տերեւի մասեր. — Եզր, երակ, ակռայ, կանթ=պոչ։

Գիրքի մը մասերը. — Կողք, կռնակ, անկիւն, խորագիր, կազմ, թերթ, էջ, գիծ, տող, բառ, գիր:

Զգեստի մը մասերը. — Թեզանիք, օձիք, կոճակ, ծալակ, գրպան, աստառ, բամպակ, կար, դերձան:

Թռչունի մը մասերը. — Փետուր, կտուց, կատար, բբուկ=խպիք, մօրուսիկ:

## ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդան անունը կը տրուի այն բոլոր օրերուն որոնց անմիջապէս կը յաջորդեն նշանաւոր շաբաթապահքեր, այդ օրերը արտակարգ ուրախութիւններ կ'ըլլան: Իսկ Բուն Բարեկենդանը կամ Մեծ Բարեկենդանն է այն օրը՝ որուն անմիջապէս կը յաջորդէ Մեծ Պահք=Բուն Պահք: Բարեկենդանները կիրակի օրերու յատուկ են, միայն Ծննդեան բարեկենդանը շաբաթուան ո եւ է օրուան կը պատահի:

Ժողովուրդին մէջ սովորութիւն եղած է բուն Բարեկենդանի երկրորդ օրն անուանել բակլա խորան:

Մեծ Պահոց կիրակիները մասնաւոր յիշատակներու նուիրուած են. Ա. Դրախտի յիշատակին,



Բ. Արտաքսման, Գ. Անառակին, Դ. Տնտեսին, Ե. Դատաւորին, Զ. Գալստեան, Է. Ծաղկազարդին:

Թելադրութիւններ. — 1. Ի՞նչ է Բարեկենդանը. — Ե՞րբ կուգայ Մեծ Պահքը. — Բարեկենդանին ինչե՞ր կ'ընեն: — Մեծ Պահոց կիրակիներն ի՞նչ անուններ ունին:

2. Բացատրել շեղագիր բառերը. — Թելադրութեամբ գրել հատուածը:

3. Յատուկ անունները որոշել:

## ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

Պէտք է ներողամիտ ըլլալ: Մարդիկ եթէ իրարու յանցանքները չներեն, պիտի չկրնային միասին ապրիլ: Յաճախ դպրոցական տղաքն են որ չնչին բաներու համար իրարու կը նախատակին եւ իրարու դէմ ոխ կը պահեն:

Օր մը դասամիջոցին, դասարանի մը տղաքը սկսան իրարու հետ վէճ ընել: Կէսը կ'ըսէր թէ պէտք է պատուհանները բանալ որովհետեւ տաք է, միւս կէսը կը պնդէր թէ պէտք է գոց պահել, որովհետեւ ցուրտ էր: Ու այս պատճառաւ իրար կը քաշքշէին, կը հրմշտկէին, մէկը բա-

նալ կ'ուզէր, միւսը գոցել, դասարանին մէջ սոսկալի աղմուկ մը։

Ուսուցիչը ներս մտաւ, ամէնքը լռեցին։ Երբ պատճառը հասկցաւ, ըսաւ անոնց. «Իրա՛ւ կը զարմանամ որ այսպէս չնչին պատճառի մը համար իրարու հետ կռուիլ եղած էք։

Ձեզմէ մաս մը կ'ուզէ որ օդը զով ըլլայ, շատ լաւ. անոնք թող սա՛ վերի պատուհանին առջեւ ժողվուին ու զայն բաց պահեն։ Միւս մասը կ'ուզէ որ տաք ըլլայ. թող սա վարի պատուհանին առջեւ հաւաքուին ու գոց պահեն զայն։ Այսքան ոչինչ բանի համար ե՞ս միջամտեմ, ե՞ս ձեզի խելք սորվեցնեմ։ Անկէ զատ, տեսէ՛ք, դուք ամէնքդ ալ յանցաւոր էք այս պահուս։ Բայց ես ձեզ չեմ պատժեր, կը ներեմ, որպէս զի դուք ալ օրինակ առնէք եւ իրարու նկատմամբ ներողամիտ ըլլաք։

Թելադրութիւններ. — 1. Դասարանին մէջ ինչե՞ր կրնան պատահիլ. — Ինչպէս վարուելու է այս պարագաներուն։

2. Բացատրել շեղագիր բառերը. — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել ենթականերն ու ստորոգելիները։



# ԿՕՇԿԱԿԱՐ

Կօշկակարը նախ ոտքին չափը կ'առնէ: Այս չափին համեմատ փայտէ կաղապար կը շինէ։ Սուր դանակով կը կտրէ նա կօշիկին երեսը և ճիտքը, ջրի մէջ կը թրջէ զայն և կաղապարի վրայ կը զամէ։ Երբոր կաշին չորնայ և կօշիկի ձեւ առնէ,



կօշկակարը զամերը կը քակէ, կօշիկը կաղապարէն կը հանէ ու յետոյ ներբանը կը կպցնէ։ Ներբանը եզան հաստ կաշիէ կը կտրէ։ Կօշկակարը ասեղով չի կարեր, այլ հերիւնով կը ծակէ, յետոյ այն ծակէն կ'անցնէ մոմած թելը որուն ծայրը, դիւրութեան համար, պնդացուցած է խոզի մազ։

Ներբանը կարելէն ետքը, կօշկակարը կրունկը կը կպցնէ և շատ բեւեռներ զամելով՝ կը պնդա-

ցընէ, յետոյ ճիտքերուն ականջները կը կպցնէ, կօշիկը կը սեւցնէ կօշկաներկով, կը սրբէ, կը փայլեցնէ եւ կը տանի զայն այն մարդուն որուն համար որ կարեց:

Թելադրութիւններ. — 1. Այլ եւ այլ հարցումներ ուղղել:

2. Բացատրել չեղագիր բառերը: — Թելադրութեամբ գրել հատուածը:

3. Որոշել Սեռի խնդիրները:

## ԴԵՐՁԱԿ

Հայրն ուզեց Կարապետին համար ասուէ բաճկոնակ մը կարել տալ: Դերձակն եկաւ անոր չափն առաւ: Տուն դառնալով՝ դերձակն ասուին կտորը փռեց եւ կաւճով գծեց վրան բաճկոնին մասերը — մէջքը, կուրծքը, բղանցքը, թեւերը, օձիքը, ծալքը, խշտիկները: Յետոյ վեր առաւ մեծ մկրատը, բոլոր այդ մասերը կտրեց եւ իր բանուորներուն տուաւ որ կարեն: Ասոնք սկսան բաճկոնակին մէկ մասն միւսին հետ կարել եւ կարերն արդուկով հաւասարցնել: Շաբաթ մը ամէն բան



աւարտած էր. կոճակները կպցուած, ճամբակները բացած, աստառած էին: Այս ամէնքը լըմնալէն ետքը, դերձակին աշկերտը մաքրեց զայն եւ տուաւ իր վարպետին, իսկ սա Կարապետին տարաւ ու հագցուց: Բաճկոնակը շատ յարմար եկաւ անոր: Կարապետին հայրը վարպետին վճարեց ասուին ու աստառին գինը եւ կարելու վարձքը, իր որդւոյն ալ դառնալով ըսաւ. «Բարով վայլէ՛ս, զաւա՛կս, միայն թէ զգուշութեամբ գործածէ՛, վասն զի սուղի նստաւ մեզի:»

Թելադրութիւններ. — 1. Այլ եւ այլ հարցումներ ուղղել:

2. Բացատրել չեղագիր բառերը. — Թելադրութեամբ գրել հատուածը:

3. Որոշել Բնութեան խնդիրները: — Բնութեան խնդիրը ի՞նչ հոլով կրնայ ըլլալ: — Սեռի խնդի՞րը:

## ԴԱՐԲԻՆ

Մեր քաղաքին մէջ դարբնոց կայ։ Դարբնոցին մէջ մեծ հնոց կայ։ Հնոցին մէջ շատ վառած ածուխներ կան, իսկ մէկ կողմը կախուած է մեծ փուք մը։ Փուքին առջեւ մարդ մը կայ կեցած և շարունակ կը փչէ զայն որպէս զի հնոցին բոցը սաստկանայ։



Դարբինը երկաթին կտորը կ՚առնէ և հնոցին մէջ կը դնէ։ Երկաթը կը տաքնայ ու կը կարմրանայ, յետոյ կը ճերմըկնայ ու կը փայլկանայ։ Դարբինը մեծ ունելիով մը կարմրած երկաթը հնոցէն կը հանէ, սալին վրայ կը դնէ, ծանր մուրճով կ՚սկսի ծեծել զայն և ուզածը կը շինէ անով.— պայտեր, գամեր, կացիններ և երկաթէ սրունակներ։ Դարբինը առջին կաշիէ գոգնոց կը կապէ, որպէս զի տաքցած երկաթի կայծերը չի կրնան զինքն այրել։

Դարբնոցը քաղքին մօտ կը շինեն և տանիքը հողով կը ծածկեն, որպէս զի կայծերէն չբռնկի։



**Թելադրութիւններ**.— 1. Այլ և այլ հարցումներ ուղղել։

2. Բացատրել չեղադիր բառերը։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որոշել Տէրբայները և Բայերը։

### ՀԱՆԵԼՈՒԿ

Արտ մը ունիմ,
Թանի կարեմ՝
Կը բուսնի։
(մազ)

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Իրականական = Դէմ յանդիմանական



Ծառուղի

**Թելադրութիւններ**.— 7. Ծառուղին.— Ի՞նչ է ծառուղի մը — Ո՞ւրկէ կուգայ ծառուղի բառը.— Ըսէ՛ք քանի մը ծառերու անուններ.— Ի՞նչ օգուտ ունին իւրաքանչիւրը։

## ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ

Սիրուն մանրավէպ մը պատմեմ ձեզի, մտիկ ըրէ՛ք։ Ատենօք հարուստ ծեր կին մը կար, զաւակ չունէր։ Այս կինը կը բնակէր իր մեծ ագարակին մէջ որուն քովը պզտիկ գիւղ մը կար։ Հարուստ կինը տեսնելով որ իր օրերը մօտեցած են, կը մտադրէ իր բոլոր կալուածներն ու հարստութիւնը տալ այն գեղացի աղջկան որ ամէնէն համեստն է։

Ուստի օր մը լուր կը ղրկէ գիւղին բոլոր աղջիկներուն և զանոնք իր տունը կը հրաւիրէ՝ ուրախ ժամանակ անցնելու, և կ'իմացնէ թէ որո՛ւն որ հաւնի՝ իրեն ժառանգորդ պիտի ընտրէ։ Գիւղին բոլոր աղջիկները կուգան, շատ գեղեցիկ, գոյնզգոյն շրջազգեստներ հագած, գլուխնին սիրուն գլխարկներ, գլխարկներնուն վրայ գոյնզգոյն փետուրներ և արուեստական ծաղիկներ։ Ամէնքն ալ սրահին մէջ մտած ժամանակ, կ'երթան մեծ հայելիին առջև՝ ինքզինքնին կը դիտեն ու նազերով կը պտըտին։ Անոնց հետ, ամէնուն ետևը, կայնած էր Վարդուհի։ Միջահասակ, շէկ մազերով սիրուն աղջիկ մը, որ հագած էր պարզ շրջազգեստ մը,



գլուխը դրած էր հասարակ գլխարկ մը, վրան դեռ նոր քաղուած վայրի կապոյտ ծաղիկներու պզտիկ փունջ մը կար։ Վարդուհի չէր համարձակեր հայելին մօտենալ, կ'ամչնար, կը դիտէր իր սիրուն ընկերները, բայց չէր նախանձեր, իսկ անոնք իր երեսն անգամ չէին նայեր, այնքան խեղճ հագուած էր անիկա։

Կինը այս համեստ աղջի՛կն իրեն ժառանգորդ ընտրեց։

Թելադրութիւններ. — 1. Այլ և այլ հարցումներ ուղղել։

2. Բացատրել շեղագիր բառերը. — Թելադրութեամբ գրել հատուածը։

3. Որո՞ւ կ'ըսուի Դերանուն։ — Որոշել Դերանունները։ — Ամբողջացնել Դերանուններու հոլովը։

---


Վանդակապատը

Թելադրութիւններ. — 8. Վանդակապատը. — Ի՞նչ է վանդակապատը. — Ի՞նչ նիւթէ կը շինուին վանդակապատները. — Ո՞ւր կը գործածուին։



Քաղաքավար Տղան

Թելադրութիւններ. — 9. Քաղաքավար Տղան. — Ի՞նչ է քաղաքավար տղայ մը. — Որո՞նց նըկատմամբ քաղաքավար ըլլալու է։

---



Ուսումնասէր Տղան

Թելադրութիւններ. — 10. Ուսումնասէր Տղան. — Ի՞նչ է ուսումնասէր տղայ մը. — Ի՞նչ յատկութիւններ ունի. — Կը ճանչնա՞ք ուսումնասէր տղաքներ. — Որո՞նք են. — Ո՞ր դասարանին մէջ են։

---



Գթած Տղան

Թելադրութիւններ. — 11. Գթած Տղան. — Ի՞նչ է գթած տղայ մը. — Պատկերին վրայ ի՞նչ կը տեսնէք։

---





Ծոյլ Տղան

Թելադրութիւններ. — 12. Ծոյլ Տղան. — Ծոյլ ըսելով ի՞նչ կը հասկըցուի. — Ի՞նչ են ծուլութեան հետեւանքները. — Ո՞րն է ծուլութեան հակառակ բարեմասնութիւնը։

---



Վախկոտ Տղան

Թելադրութիւններ. — 13. Վախկոտ Տղան. — Ի՞նչպիսի մէկն է վախկոտ տղան. — Ո՞րն է վախկոտութեան հակառակ բարեմասնութիւնը։

---



Աղտոտ Տղան

Թելադրութիւններ. — 14. Աղտոտ Տղան. — Ի՞նչպէս կ՚ըլլայ աղտոտ տղայ մը. — Աղտոտութեան հակառակ բարեմասնութիւնը ո՞րն է. — Ի՞նչ է աղտոտութեան հետեւանքը։

---



Թռչունը

Թելադրութիւններ. — 15. Թռչունը. — Ըսէ՛ք քանի մը թռչուններու անունները. — Ի՞նչպէս կը թռչին. — Ի՞նչ բանի կը ծառայեն թռչունին թեւերը:



Բոյնը

Թելադրութիւններ. — 16. Բոյնը. — Ի՞նչ է բոյն մը. — Ի՞նչ կը գտնուի բոյներուն մէջ. — Ներե՞լ է թռչուններուն բոյնը աւրել:



Վանդակը

Թելադրութիւններ. — 17. Վանդակը. — Ի՞նչ է վանդակը. — Ո՞ր թռչունները կը պահուին վանդակին մէջ. — Ի՞նչ կեր կը տրուի վանդակի թռչուններուն. — Ո՞վ կ'ուտէ կանեփհատը:

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ


| | Էջ |
|---|---|
| Վաւերագիր Ուսումնական Խորհրդոյ | Է |
| Մեր տունը | ԺԱ |
| Հայրենի տուն | 14 |
| Գիւղակ եւ Գիւղ | 16 |
| Մշակի երգ | 19 |
| Քաղաք | 20 |
| Աստուած | 22 |
| Կաղանդ | 24 |
| Օրօր Մանկիկին | 26 |
| Յիսուսի Ծնունդը | 28 |
| Երգ Ծննդեան | 30 |
| Ծիր Կաթին եւ Սուրբ Աստուածածին | 31 |
| Հայր Մեր | 33 |
| Ազատարար | 33 |
| Մայրիկս | 35 |
| Տեառնընդառաջ | 37 |
| Յաջող պատասխան | 39 |
| Յիսուսի Մկրտութիւնը | 41 |
| Երեք տեսակ մարմիններ | 44 |
| Արձագանգ | 46 |
| Փոխադարձ դաս | 48 |
| Տասնաբանեայ Պատուիրանք Առողջապահութեան | 50 |
| Տասնաբանեայ Պատուիրանք Դպրոցական Տղոց | 52 |
| Մարմինին անդամներուն վէճը | 54 |
| Յիսուսի Յարութիւնը | 56 |
| Քրիստոս Յարեաւ | 58 |
| Ժրաջանութիւն | 59 |
| Ողնայարաւոր կենդանիներ | 61 |
| Յիսուսի Համբարձումը, Հոգեգալուստ | 64 |
| Բարիքով զուարճանալ | 66 |

| | էջ |
|---|---|
| Կմախք | 68 |
| Գութ | 70 |
| Իրան | 72 |
| Անդամներ | 74 |
| Վարդավառ | 75 |
| Վարձատրութիւն | 78 |
| Վերափոխումն Ս. Աստուածածնի | 80 |
| Առտուան ճառագայթները | 82 |
| Ընտանի Մսակերներ | 84 |
| Կրծողներ | 85 |
| Շուն | 87 |
| Նապաստակը | 88 |
| Որոճացողներ | 89 |
| Այծը | 91 |
| Պայտ | 92 |
| Կենդանիներու վէճը | 93 |
| Կորսուած Հորթ | 95 |
| Արջն ու Թոժիւնը | 97 |
| Քաղցր բնաւորութիւն | 98 |
| Ծիծեռնակ | 100 |
| Սագեր | 101 |
| Աղուէս եւ Օձ | 103 |
| Անձնուրացութիւն | 106 |
| Քաջութիւն | 108 |
| Բարեկենդան | 110 |
| Ներողամտութիւն | 111 |
| Կօշկակար | 113 |
| Դերձակ | 114 |
| Փարբին | 116 |
| Համեստութիւն | 118 |
| Թելադրութիւններ | 119 |

2013
3999
<< Ազգային գրադարան >>
NL0062558

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Միացեալ Ընկերութեանց Հայ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

## ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ՄԵԹՈՏՈՎ ՊԱՏՐ

1. Մանկապարտէզ Ա. Տարի . . . .
2. Մանկապարտէզ Բ. Տարի . . . .
3. Տարրական Դասընթացք Ա. Տարի . . .
4. Տարրական Դասընթացք Բ. Տարի . . .
5. Միջին Դասընթացք Ա. Տարի . . . .
6. Միջին Դասընթացք Բ. Տարի . . . .
7. Մայրենի Լեզու Գ. Տարի . . . .
8. Մայրենի Լեզու Դ. Տարի . . . .
9. Ա. Գիրք Ֆրանսերէնէ ի Հայ թարգմանութ.
10. Քրիստոնէական . . . . . . . .
11. Գեղագրութիւն և Թահտանեանի

Տետր Ա. 20 փարայ
» Բ. » »
» Գ. » »
» Դ. » »
» Ե. » »
» Զ. » »

Սոյն հրատարակութեանց համա
դիմել ուղղակի Ընկերութեան գրասենեակ
Պոլիս, Պահչէ Գափու, Սատըգիէ խան, ր